

22.417

Վ. ԽԱԶԻԿՈՂԼՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԱԶԽԺՈՂԿՈՄԱՏԸ
ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ
ՏԱՍՆԱՄՅԱԿԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
Академии наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1980

331

Խ-28

Խ-28

Վ. ԽԱԶԻԿՈՂԼՅԱՆ

05 FEB 2003
15 JAN 2010

Հ. Ս. Խ. Հ. ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԸ
ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ
ՏԱՄՆԱՄՅԱԿԻՆ

■■■■■■■■■■



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1930

8 MAY 2013

21717



59597-66

Հրատ. № 1460

Գրատ. № 6018 (բ). Պատվ. № 1239, Տիրաժ 3.000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

«...բայլիկիկյան հարձակման ելությունը կայանում է նրանում, վոր պրոֆմիթյունների, կոոպերատիվների, խորհրդային և այլ մասսայական կազմակերպությունների ամբողջ գործնական աշխատանքը վերակառուցենք վերակառուցման շրջանի պահանջների համեմատ. նրանցում կորիզ ստեղծենք ամենաակտիվ և հեղափոխական գործիչներին, յետ մղելով և չեղոքացնելով ոպպորտյունիստական տրեդ-յունիոնիստական, բյուրոկրատական տարրերին. նրանցից դուրս շարտենք խորթ և այլս-սերված տարրերին ու նոր գործիչներ առաջ քաշենք ներքևից»:

ՄՏԱԼԻՆ

Յեթե սրանից ուղիղ տաս տարի առաջ Հայաստանը տնտեսապես ավերակների կույտի չեր վերածված, հայ ու ոտար բուրժուազիայի կամակատար դաշնակցականների կողմից պատերազմների ու ալան-թալանի վայր եր դառել, այսոր թորհ. Հայաստանի կազմակերպված աշխատավորական հսկա բանակները վերականգնելով ու վերակառուցելով տնտեսապես ծայր աստիճան քաղքալված մեր չերկիրը, ամբողջ թորհ. Միության բանվորության հետ ձեռք ձեռքի տված թեակոխում են 5-ամյակի հաղթական յերրորդ տարին: Տասը տարի առաջ քաղցած բանվորն ու ծառայողը ծանր զրկանքներով լի շահագործվում էին բոլոր տեսակի ձրիակերների կողմից կամ զզվանքով աշխատում: Այսոր նրանք պրոլետարական դիկտատուրայի շնորհիվ ստեղծել են նյութական, կուլտուր-կենցաղային անհամեմատ աւելի լավ վիճակ. նրանք աշխատանքն ու գասակարգային պալքարը համարելով պատվի ու փառքի գործ, աշխատավոր դյուղացու հետ միասին բոլոր տեսակի գասակարգային թշնամիների մնացորդներին վերջնական մահացու հարված տալով, բոլոր տեսակի ոպպորտյունիստական, տրեդ-յունիոնիստական տրամադրություններին վճռողական հարվածելով և սոցմրցման ու հարվածայնության բարձր աստիճանին դիմելով՝ սոցիալիզմի կառուցումն են դարբնում քաղաքում և գյուղում:

Վ. Խ.

Յ Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Հրատարակել աշխատանքի պատմությունը Հայաստանում - այդ բավականին լուրջ ու դժվարին գործ է, և դրա համար լեզու-կար ժամանակ է պետք: Յես այդ նպատակը բոլորովին չեմ ու-նեցել. իմ այս գրքուկով ցանկացել եմ միայն նկարագրել Աշխ-ժողկոմատի տասնամյա համառոտ գործունեությունը, ըստ հնա-րավորության յալով նրան վորոշ տնտեսական-քաղաքական լու-սաբանում և ցանկանալով մեր բանվորական լայն մասսաների հա-մար հանրածանոթ դարձնել Աշխժողկոմատի գործունեությունը:

Ժամանակի սղության և մի շարք տեխնիկական պատճառ-ների հետևանքով հնարավոր չեղավ ավելի մանրամասն տալ այդ-յես մինչև անգամ համոզված եմ, վոր կլինեն բավական թերու-թյուններ, առաջին հերթին, որինակ, այն պակասը, վոր չկարո-ղացանք այս գրքուկում բավարար չափով մեր արդյունաբերու-թյան, արտադրողականության բարձրացման ամբողջ պատկերը նկարագրել և այլն:

Վ. Խ.

1 նոյեմբերի 1930 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Կապիտալիստական բոլոր յերկրներում, մինչև անգամ ամե-նից շատ «կուլտուրայես» ու տեխնիկայես զարգացած Ամերի-կայում, բանվոր դասակարգը դուրի է աշխատանքի իրավունք-ների տարրական պաշտպանությունից: Յեթե այս կամ այն կա-պիտալիստական պետության մեջ գոյություն ունի «Աշխատան-քի որենք» (յեթե կարելի չե այդպես անվանել), այդ նրանց ձեռ-քի տակ շահագործվող բանվոր դասակարգի ծանր կռվի արդյունքն է, և այդ որենքներն էլ մնում են թղթի վրա, վորովհետև նրանց մշակողն ու կենսագործողը բանվոր դասակարգի ներկայացուցիչ-ները չեն: Այդ դեռ բավական չէ. այնտեղ պրոֆմիությունները սահմանափակ իրավունքներ ունենալով և մեծ մասամբ ընկած լինելով Ամստերդամի դեղին Խտերնացիոնալի ազդեցության տակ՝ բանվորի աշխատանքի և իրավունքների պաշտպանության համար շատ քիչ բան են կատարում: Այդպիսի պետությունների շարքին է պատկանել նաև ցարական Ռուսաստանը և Ժամանա-կավոր կառավարության Ռուսաստանը:

Ավելի վատ դրություն մեջ էր դաշնակցական Հայաստանը: Առանց այն էլ հետամնաց ու աղքատ այդ յերկիրը նրանց 2 և կես տարվա գործունեության ընթացքում տնտեսապես ավելի քայքայման յենթարկվեց. այն ժամանակ գյուղատնտեսությունը վերջնական քայքայման ճամպին էր գտնվում, 70 % -ով կործան-ման էր յենթարկված: Գործարանային արդյունաբերությունը, վորը գտնվում էր ոտար կապիտալիստների ձեռքին, ամբողջո-վին քայքայվել, կանգ էր առել: Այս պայմաններում ի՞նչ խոսք կարող էր լինել զբաղված բանվորական ուժի և նրա աշխատան-քի պաշտպանության մասին, գոյություն ունեցող մանր-մունք ար-հեստանոցներում աշխատավորները հարյուրներ էլին կազմում, վորտեղ, կարելի չե ասել, կանոնավոր աշխատանքի բացակայում

եր: Կարելի չէ հիշել այն ժամանակվա աչսպես կոչվող խնամատարութեան միջնորդութեան մասին, վորն ավելի քիչ գործ կատարեց աշխատանքի պաշտօնաւորութեան հարցերում, քան ցարական «գործարանային տեսչութիւնները»: Նրանք այն ժամանակ շահագործման ավելի լայն ասպարեզ ելին տվել գործատերերին, մեծամեծ պաշտօնային-հողատերերին ու վանահայրերին: Պրոֆշարժման մասին նույնպես պատմութեանն ունի հարուստ եջեր դաշնակցական «տրեդյունիոնիստական», ավելի ճիշտը՝ ֆաշիստական քաղաքականութեան մասին: Յեւ այս բոլորի կենդանի ապացույցներն ելին դեռ 1919/20 թվերի տեղի ունեցած հացի, աշխատանքի իրավունքներ ձեռք բերելու համար և զանազան բռնութիւնները դեմ յեղած ցույցերն ու յեղուցները (Ալեքսանդրապոլի-Յերեանի յերկաթ. բանվորութեան կողմից, վորոնց ղեկավարներն անխնա կերպով բանտ ելին նետվում), կամ 1920 թվի մայիսիսկյան հսկա ցույցերը և, վերջապես, Մայիսյան ապստամբութիւնը, վորոնք վերջին հաշիւով պրոլետարական դիկտատուրայի համար մղվող կռիւ եր՝ ուղղված հայ բուրժուազիայի այդ հակահեղափոխական կատաղի ռեժիմի դեմ:

Մակայն Ռուսաստանի բանվորութիւնն աշխատավոր գյուղացիութեան ոգնութեամբ և բայելեիկյան կուսակցութեան ղեկավարութեամբ Մեծ Հոկտեմբերի դրոշակը պարզեց և չեղեցադի վրա առաջին խորհուրդներին իշխանութիւնը հիմնեց, վորը կազմակերպեց աշխատանքի պետական պաշտպանութեան ոբգաններն ու հիմք դրեց իսկական աշխատանքի ոբենսդուրքայնը: Սրանց հետ զուգընթաց ցարական Ռուսաստանի շղթայակապ փոքրիկ պրոֆշարժումը անսահման աշխատանքի հրապարակ գտավ և հսկայական զարգացման ծավալ ստացավ. և այդ միլիոնավոր բանվորական աշխատավորական մասսաներն ու նրանց ներկայացուցիչները՝ վերջ դնելով շահագործող տիրապետութեանը՝ իրենք են կազմակերպում աշխատանքի բոլոր որդանները՝ Աշխատողկոմատ, աշխատանքի տեսչութիւններ, սոցապգանձարկղներ, աշխատանքի դատարաններ, աշխատանքի որենքներ և այլն: Ռուսաստանի ու Ադրբեյջանի պրոլետարիատի ոգնութեամբ Հայաստանի բանվորութիւնն ու գյուղացիութիւնը Նոյեմբերյան հեղափոխութեան միջոցով տապալելով հայ բուրժուազիայի իշխանութիւնը, նույնպիսի նվաճումներ ձեռք բերեցին:

Խորհրդային Հայաստանի բանվորութեան և աշխատավոր գյուղացիութեան անցած այս տասնամյա հեղափոխական կռիւ

ու ստեղծագործող աշխատանքի խոշոր արդյունքները մեկն ել Աշխատանքի ժողովրդական կոմիտեաբիատի կազմակերպան և այն



Հ. ԿՅՍՅԱՆ
(ՀՄԽՀ Աշխատողկոմ 1920—21 թթ.)

Մի կողմից պետք եր աշխատանք տալ այդ վերադարձող ընդհուրը դարձած աշխատավորներին, տնտեսապես քայքայված չքավոր ու միջակ գյուղացիներին, իսկ մյուս կողմից նոր կազմակերպվող խորհրդային որդաններին ու արդյունաբերութեանն աշխատավորներ տրամադրելու-կազմակերպելու լուրջ գործն եր, վոր պիտի կատարեր Աշխատողկոմատը: Այն ժամանակ քիչ դժվարութիւններ չեր առաջացնում բարձր վորակալ կադրերի վորոշ մասի կողմից տեղի ունեցող աշխատանքի դասակարգութիւնը, վորի դեմ պայքարելու միջոցներն հանդիսացան «աղմակային կոմունիզմի» աշխատանքի մեթոդները (պարտադիր աշխատանք, մասնագիտների մորիլիկացիա) և այլն:

1920-21-22 թվերին Աշխատողկոմատի գործող ապարատն իր ուղղորդութիւնը կենտրոնացրել եր գլխավորապես այդ ուղղու-

ատիճանարար ուժեղացնելու գործն և յեղել: Կազմակերպվելով՝ խորհրդայնացման առաջին իսկ օրը՝ Աշխատողկոմատը այդ ավելի-վաճ և քայքայված շրջանում մեծ դեր ունեւր կատարելու:

Իմպերիալիստական պատերազմները և դաշնակցական ազգամիջյան կռիւներից սովի ու համաճարակի մատնված փոքրաքանակ բանվորութիւնը և բոլոր աշխատավոր տարերը ցիր ու ցան ելին յեղել զանազան վայրեր: Խորհրդայնացման առաջին իսկ օրերից նրանք վերադառնում են իրենց բնակավայրերը:



Ա. ԱՂԱԲԵԿ
(ՀՄԽՀ Աշխատողկոմ 1921—23 թթ.)
բանվոր

Թյամբ: Յեվ այդ տարիներում նրա հաստիքային միավորների մոտ 50 0/0-ն զբաղված է յեղել բանուժի հաշվառման, մատակարարման, մի տեղից մյուս տեղը վերադասավորման գործով: Գործող ապարատի հիմնական բաժինը յեղել է «բանուժի հաշվառման բաշխման բաժինը», ապա դասավորության դեմ պայքարող լենթաբաժինը, մոբիլիզացիոն լենթաբաժինը և այլն:

Յերկրորդ դժվարին հարցը աշխատավարձի կարգավորման խնդիրն էր, վորը, բանվորների և աշխատավորների դրուժյան բարեկաման զուգընթաց, պետք է հաշվի առներ մեր քաղաքայված յերկրի վերականգնումը և նոր արդյունաբերության կազմակերպումը: Հայաստանը այդ շրջանում վնչ միայն՝ տնտեսապես միանգամայն վատթար դրուժյան մեջ լինելով՝ զուրկ էր արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքներից, այլև աշնտեղ բացակայում էր կաշուն վալյուտան: Յեվ ահա այսպիսի դժվարին պայմաններում այնուամենայնիվ հնարավորություն լեզավ մեր նոր կազմակերպվող ու ծաղկող ժողտնտեսության մեջ զբաղված աշխատավորության նյութական կարիքները հոգալ, մի կողմից Ռուսաստանի պրոլետարիատի նյութական ոգնության, և մյուս կողմից մեր կատարած աշխատանքների շնորհիվ: Աշխատավարձի հարցի կանոնավորման պայմաններ ստեղծվեցին, յերբ մի կողմից կիրառվեց 1924 թ. դրամական ռեֆորմը և մյուս կողմից Աշխտկոմատը, յեղելով մեր մյուս խորհրդային Հանրապետությունների փորձից, ընդունեց 17 կարգանոց 1:8 հարաբերականով տարիֆային ցանցը ու մնացած տարիֆային աշխատանքների հարուստ ձևերն ու մեթոդները և այդպիսով կարողացավ ճիշտ աշխատավարձի քաղաքականություն կիրառել, հարթելով հանդես յեկող դժվարությունները:

Յերրորդ հարցը աշխատանքի պաշտպանության խնդիրն էր, վոր պակաս նշանակություն չունեի: Այս խնդրում աշնքան ել բարդություններ չկային: Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ որենքով սահմանված 8-ժամյա աշխատանքի կիրառումը հսկայական արձագանդ գտավ ամբողջ կապիտալիստական աշխարհում, և այդ դարձավ աշնտեղի բանվոր դասակարգի համար մի խոշոր պայքարի նշանաբան, վորը նպաստում է որեցոր ուժեղացող քաղաքական կռիվին: Կապիտալիստական պետությունների շարքին է պատկանել և դաշնակցական Հայաստանը, յեթե վոչ ավելի վատ:

Հոկտեմբերյան հեղափոխության սկզբի որերից հրատարակված աշխատանքի վերաբերյալ դեկրետներն ու վորոշումներն մեծ

հնարավորություններ տվին մեզ, յեղելով Ռուսաստանի պրոլետարիատի փորձից, սկզբից ևեթ առանց դժվարությունների կա-



Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
(ՀՄԽՀ Աշխտկոմ 1923—27 թթ.)

նոնավորել աշխատանքի պաշտպանության հարցերը: Խորհրդայնացման առաջին որվանից մեզ մոտ որենքով խստիվ սահման-



Ն. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ
(ՀՄԽՀ Աշխտկոմ 1927—28 թթ.)
բանվոր



Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ՀՄԽՀ Աշխտկոմ 1928—29 թթ.)
բանվոր

վեց և կիրառվեց 8-ժամյա բանվորական շորը: Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Անդրկովկասյան Ֆեդե-

բացի այլ կողմից հաստատված աշխատանքի որենազրույթը 1922 թ. հունվարի 1-ից տարածվում է նաև խորհրդային Հայաստանի վրա, վորն ավելի հեշտացնում է այս ուղղությամբ մեզ աշխատանքները: Յեւ ակդպիսով ունենալով աշխատանքի վերաբերյալ բոլոր հարցերի ու նորմաների խիստ սահմանում, մեզ մնում էր անշեղ այն կիրառել: Այս այդ աշխատանքային որենազրույթունից մի կետ, վորի մասին արժե վերհիշել. ֆիզիկական աշխատողներին համար 8-ժամյա աշխատանք, մտավորների համար՝ 6 ժամ, 14—16 տարեկանների համար՝ 4 ժամ, 16—18 տարեկանների համար՝ 6 ժամ, գիշերային աշխատանքների համար 1 ժամ պակաս աշխատանք է այլն, վորոնք միայն հատուկ են պրոկտորական ղեկավարության:

Թե խորհրդայնացման առաջին որվանից ինչպիսի հսկայական արագ տեմպով խորհրդային Հայաստանի բանվորն ու գյուղացին իրենց ղեկավարին պաշքարի ու ծանր զրկանքների գնով վերականգնեցին իրենց ժառանգած ծայրաստիճան քայքայված յերկիրը, վերակառուցեցին — ստեղծեցին նոր արդյունաբերություն, կառուցեցին տասնյակ ջրանցքներ ու էլեկտրոկայաններ է այլն է այլն, — այդ մասին ընթերցողը հարուստ նյութեր կարող է գտնել մեր մամուլում, իսկ այստեղ մենք կապացուցենք այդ մեր սոցիալիստական շինարարության մեջ զբաղված բանվորական ուժի աճման միջոցով, վորը ցույց է տալիս հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ № 1

Ամբողջ զբաղված բանվորական ուժի շարժումը

	1922—23	1923—24	1924—25	1925—26	1926—27	1927—28	1928—29	1929—30
Զբաղված բանուժի թիվը	14,804	19865	28506	35950	39369	41695	43892	64582
%-ով նախորդ տարվա համեմատությամբ	—	134.2	143.5	126.1	109.5	105.9	105.3	147.1



Ա. ԳԱԼՈՅԱՆ
(ՀԱՄԻ-ի նախագահ)
բանվոր



Ա. ԽԱՉԿՈՂԼՅԱՆ
(ՀՍԽՀ Աշխտողի միություն)
բանվոր



Ա. ՇՈՎԱՆՆԻՍՅԱՆ
(Սոց. Ապահովագրության հանր. գանձարկղի նախագահ է Աշխտող-կոմի տեղակալ)
բանվոր

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Յերբ մեր քաղաքի և գյուղի արդյունաբերության վերականգնման ու զարգացման պահանջներից յեկնելով անցնում ենք նոր տնտեսական քաղաքականության շրջանը, այստեղ ավելի խոշոր նշանակություն և ստանում աշխատանքի պաշտպանության հարցերի ուժեղացման գործը: Վերովհետև մասնավոր սեկտորին բավական խոշոր հնարավորություններ եր տրվում՝ զբաղվելու մասնավոր առևտրով և զանազան մանր-մունք արհեստանոցներ ու այլ աշխատանքներ կազմակերպելու, իհարկե նման պայմաններում անխուսափելի լինելու մոտ աշխատող բանվոր-ծառայողների շահագործումը: Այնուհետև մեր հիմնարկ-ձեռնարկներում անցյալից ժառանգած բյուրոկրատիզմի հին մնացորդների արտահայտությունները վերջին հաշվով շատ դեպքերում խոչընդոտ կլին հանդիսանում աշխուրհագրության կիրառմանը և այլն: Բացի այս բոլորից՝ յերկրագնդի վրա միակ պրոլետարական-դասակարգային բովանդակություն ունեցող մեր այդ Աշխուրհագրքը չէր կարող մեր տնտեսական-քաղաքական կյանքի այս փոխանցիկ շրջանից բխող նորանոր պահանջները բազմակողմանիորեն բնդգրկել:

Յեվ ահա հիշյալ դրությունից յեկնելով՝ մենք աշխատանքի որոնագրությունը համարում ենք բանվորական մասսաների աշխատանքի խնդիրների կանոնավորման միևնույն: Այս տեսակետից անհրաժեշտություն և առաջ գալիս ավելին կատարելու, քան Աշխուրհագրքով և սահմանված: Անհրաժեշտ և բանվորի աշխատանքի ու նյութական խնդիրների բարելավման գործն իր անհրաժեշտ բարձրության վրա դնել, ինչպես և ժողտնտեսության արագ զարգացման դժվարությունները հարթել: Այս ուղղությամբ աշխատանքի մարմիններին մեծ աջակցություն ցույց տալով՝ խոշոր դեր են կատարում արհմիությունները. նրանք հավաքական պայմանագրերի միջոցով փոխադարձ պարտականություններ են ստանձնում, հրապարակ հանում հիմնարկ-ձեռնարկներում աշխատանքի ու արտադրողականության միջև լիցած առանձնահատկություններն ու փոխարարբերությունները և ապա հարթում այն բոլոր խոչընդոտները, փորոնք առորյա պահանջներից են առաջանում և փորոնք անհնարին և ամբողջությամբ աշխուրհագրության

դրությունը լուծել: Յեվ այդ բոլորը որինականացվում և Աշխ-ժողկոմատի մարմինների միջոցով:

Աշխատանքի պաշտպանություն հասկացողությունը կարելի է յերկու հիմնական մասի բաժանել՝ 1) աշխատանքի իրավական պաշտպանության հսկողություն և 2) աշխատանքի պայմաններն առողջացման ու տեխնիկական անվտանգության հսկողություն: Չնայած վոր այս հարցերի կանոնավորումը հիմնականում մեր աշխուրհագրությունը դրել և և այն կիրառելով ուժեղ կերպով նպաստում ենք բանվոր դասակարգի ու սոցիալիստական շինարարության շահերին, այնուամենայնիվ անհնարին և առանց աշ-



Աշխատանքի պաշտպանության հարցերի նորավարտներ

խատանքի որդանների (աշխատանքի) ուժեղ հսկողության ցանկալի դրություն հասնել: Յեվ ահա մեր ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանուժի աճման հետ զուգընթաց, Աշխատանքի պաշտպանության բաժինների ապստարտներն ուժեղանում-լայնանում են, նրանց հետ միասին աշխատանքի տեսությունների քանակն ու վորակը նույնպես աճում է: Յեթե Աշխ-ժողկոմատը 1921 թ. ունեցել և միայն Աշխ. պաշտպանության բաժնի վարիչ, 1922 թ. բացի բաժնի վարիչից նաև 4 հաստիքային միավոր (հրահանգիչ, 2 աշխ. տեսուչ և 1 աշխ. փոխադրահարկի լենթաբաժնի վարիչ), 1923 թվին 7 հաստիքային միավոր և այդպես շարունակ տարեցտարի՝ աստիճանաբար ավե-

լացել է: Այժմ Հայաստանում աշխատանքի իրավական-գյուղատնտեսական տեսուչների թիվը հասնում է 29 հոգու, տեխնիկական տեսուչների թիվը՝ 4-ի, իսկ սան. տեսուչներինը՝ 3-ի:

Աշխատանքի պաշտպանությունը քննադատում խոշոր ուշադրություն է դարձված բատրակություն սպասարկման վրա: Յեթե մինչև այժմ ոտար չերկրներում 50 միլլիոնից ավելի գյուղատնտեսական պրոլետարիատը մնում է դեռ անկազմակերպ ու անպաշտպան դրուժյան մեջ, կամ յեթե նրանք դաշնակցական Հայաստանում հողագուրդ ելին հարյուրավոր չքավոր գյուղացիների հետ միասին, ապա նրանք մեզ մոտ Հայաստանի խորհրդրդայնացման առաջին իսկ որից ստացան հող (մեզ մոտ վարձու աշխատանք տանող գյուղբանվորությունը հողագուրդ չե) և 1923 թվից արդեն կազմակերպվեցին կարմիր պրոֆմիուկյունների մեջ: Այժմ Գյուղատնտես միությունը Ն. Հայաստանի արհարժման մեջ 26 հազարանոց բանակ է կազմում և ակտիվ կերպով մասնակցում է մեր սոցիալիստական շինարարության աշխատանքներին:

Բատրակների աշխատանքների պաշտպանությունը դործը լավ հիմքերի վրա դնելու համար, բացի արհմիությունների և Աշխ-ժողկոմատի կողմից տարված աշխատանքներից, նաև խոշոր աշխատանք են կատարել մեր բոլոր տեղական խորհրդային որդաները, միշտ եւ անխնա կռիվ մղելով շահագործող կուլակային տարրերի սանձարձակությունների դեմ:

Մինչև 1925 թիվը քիչ դժվար եր բատրակների աշխատանքի պաշտպանության հարցերի կանոնավոր լուծումը, բայց արդեն 1925 թ. ապրիլին հրատարակվեց ՆՍՀՄ-ի Ժողկոմխորհի կողմից հատուկ վորոշում, «Ժամանակավոր կանոններ», վորն ընդունվեց Հայաստանի Ժողկոմխորհի կողմից և այդպիսով լայն հնարավորություն ստեղծվեց աշխատանքի մարմինների և գյուղ-խորհուրդների համար՝ այդ ուղղությամբ ավելի ուժեղ աշխատանքներ տանելու:

Աշխժողկոմատը մինչև 1923 թ. բատրակների սպասարկման աշխատանքները կատարում եր իր կենտրոնական ապարատի միջոցով, իսկ 1924—25 թ. բոլոր դավառներում գյուղատնտեսական տեսուչներ կային և այժմ նրանց թիվը հասնում 25-ի: Կասկած չկա, վոր աստիճանաբար բատրակությունը, իբրև այդպիսին, մոտ ապագայում վերացվելու չե, կուլակների, վորպես դասակարգի վերացման և անհատ տնտեսությունների կոլլեկտիվացման հետ միասին. այդպիսով հետագայում բատրակության խո-

շոր մասը պիտի ընդգրկվի կոլլեկտիվ տնտեսություններում ու խորհրդային տնտեսություններում, մնացած մասն եւ արդյունաբերության մեջ առաջընթացի կարգով, ընտրվելով զանազան որդաններում: Այնուամենայնիվ այս բոլորը չի նշանակում, վոր մաղաչախ անգամ թուլացնելու յենք աշխատանքը բատրակության մեջ. ընդհակառակը, աշխատանքի մարմիններն առավել ևս պետք և ուժեղացնեն իրենց աշխատանքները, մի կողմից աշխ-պաշտպանության հարցերն ավելի բարվոք վիճակի հասցնելու խորհ. տնտեսություններում աճող գյուղատնտեսական բանվորության վերաբերյալ և մյուս կողմից եւ կոլլեկտիվ և խորհ. տնտեսություններում աշխատանքի կազմակերպման հարցերի կանոնավորումը դարձնելով իրենց ուշադրության կենտրոնը. մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնելով բանվոր դարձած, առաջ քաշված կամ կոլխոզնիկ լատրակի աշխատանքի պայմանների առողջացման և լավացման վրա:

Կարևոր տեղ են բռնում կանանց աշխատանքի պաշտպանության հարցերը: Յեթե մինչև այսօր կապիտալիստական չերկրներում նրանց աշխատանքի պաշտպանության հարցերը թողնված են բախտի բերմունքին, վորի հետևանքով նրանք վիչ միայն ֆիզիկապես քայքայվում-հյուծվում են, այլև դադարում են առողջ ծննդաբերողներ լինելուց, մեզ մոտ գյուղություն ունի բոլորովին հակառակ պատկեր: Կանայք մեր Սահմանադրությամբ բոլորը տղամարդկանց հավասար իրավունքներ ունեն: Բացի հերթական լրացուցիչ արձակուրդներից, կին-բանվորներին աշխորենսդրությունը տրվում է 8 շաբաթ արձակուրդ ծննդաբերությանից առաջ և այդքան եւ հետո, պահելով նրանց աշխատանքի տեղը, տալով լրիվ աշխատավարձը, ինչպես նաև հնարավորություն է տրվում աշխատանքի ժամերի հաշվին յերեխաներին կերակրելու և այլն: Կանանց աշխատանքի պայմանների առողջացման հարցերի կանոնավորումը միշտ եւ յեղել է արհմիությունների ու Աշխժողկոմատի ուշադրության կենտրոնը. նրանց դրությունն ավելի լավացնելու և թեթևացնելու տեսակետից տարեց տարի մեծանում, լայնանում է մտւրները ցանցը, հանգստի տներում կազմակերպում են հանգստացող բանվորուհիների յերեխաների համար հատուկ մտւրներ: Այս բոլորը բավական չե. պետք է հետագայում այս ասպարիզում ավելի ուժեղ աշխատանքներ կատարել:

Աշխատանքի պաշտպանությունն ասպարիզում մեր ուշադրություն կենտրոնն է չեղել նաև յերիտասարդ բանվորությունը: Բուրժուական իրավակարգերում նրանք, մինչև անգամ անչափահասները, 8—10 ժամ են աշխատում, անխնա շահագործման են չենթարկվում, իսկ մեղ մոտ նրանք վաչկում են այն իրավունքները, վոր տվել է մեր աշխուրենսդրությունը (14—16 տարեկաններին 4 ժամ աշխատանք, 16—18 տարեկ. 6 ժամ և այլն): Իրանով մենք չենք բավարարվել: Պրոֆմիությունները և Աշխատողի մասին իրենց ընթացիկ աշխատանքներից դուրս հատուկ ծրագրային աշխատանքներ են տանում յերիտասարդությունն աշխատանքային հարցերը կանոնավորելու և լավ պայմաններ ստեղծելու համար: Առանձին դրական աշխատանքներ են կատարվել յերիտասարդության վորակավորման, նրանց աշխատանքի պայմանների Շառողջացման վրա: Միայն 1930 թվի ընթացքում 4062 հոգի բրոնյայի կարգով տեղավորված են դա-

Աղյուսակ № 2

Աշխատանքային կողմից կատարված հետազոտումները.

	1922—23 թ.	1923—24 թ.	1924—25 թ.	1925—26 թ.	1926—27 թ.	1927—28 թ.	1928—29 թ.	1929—30 թ.
Աշխատանքային կողմից կատարված հետազոտումների թիվը . .	846	1272	1769	1779	1790	2186	2171	1486
‰-ով նախորդ տարվա համեմատությամբ . . .	—	150,4	139,1	100,6	100,6	122,1	99,3	68,4

նազան ձեռնարկներում՝ վորակ ձեռք բերելու և հետագայում լավ աշխատավորներ դառնալու համար. յուրաքանչյուր տարի միջին հաշվով բոլոր ձեռնարկները պարտավոր են այս կարգով մինչև 5‰ — վերցնել անչափահասներից բրոնյա, վորը թեթևացնում է մեր բանվոր-ծառայողների զավակներին վորակավորելու և աշխատանք տալու գործը: Ճասնականորով, հարյուրներով տեղավորում ենք յերիտասարդությունից զանազան կուրսերում, գլորոց-


ներում՝ վորակի վաղբեր պատրաստելու համար: Միայն վերջին տարում 395 հոգի պատրաստել ենք Փարգործուսի գծով (յերկաթուղին չի մտնում): Յերիտասարդության, մասնավորապես բառարկների աշխատանքի պաշտպանության մեջ, իրեն հին սերնդին փոխարինող, առողջ և թարմ կադրերի, խոշոր գործ և կատարել և կատարում և ԼԿՅԵՄ կազմակերպությունը: Յերկրորդ տարին է,

Աղյուսակ № 3

Աշխատանքի որեմները խախտելու համար պատասխանատվության յենթարկված անձինք

	1922—23 թ.	1923—24 թ.	1924—25 թ.	1925—26 թ.	1926—27 թ.	1927—28 թ.	1928—29 թ.	1929—30 թ.
Պատասխանատվության յենթարկվածները վարչական կարգով . .	—	—	—	—	236	330	815	625
Պատասխանատվության յենթարկվածները դատական կարգով . .	—	—	—	—	95	74	174	116
Ընդ. պատասխանատվության յենթարկված	224	362	156	243	331	404	989	741
‰-ով նախորդ տարվա համեմատությամբ	—	161,6	43,1	155,8	136,2	122,1	244,8	74,9

վոր Աշխատողի մասը հատուկ աշխատանք ունի յերիտասարդության մեջ աշխատանք տանելու համար: Բավարար դրություն մեջ չեն տնային-ծառայող ու բառարկ յերիտասարդության աշխատանքի պաշտպանության հարցերի կանոնավորումը. այդ ուղղությամբ պետք է շարունակել ուժեղ աշխատանք կատարել: Աշխատանքի իրավական պաշտպանության ասպարիզում կատարված աշխատանքների պատկերը յերևում է Ա.Ն. 2, 3, 4 աղյուսակներից):



Հիշյալ № 2 աղյուսակից լերևում է, վոր վերջին լերկու տնտեսական տարիներում հետադուրթյունների քանակը վորոշ չափով ընկել է (գլխավորապես գյուղի հաշվին). այս բացատրվում է գլխավորապես ապարարատային թերություններով. աշխատեսուչներն ավելի շատ մասնակցություն ունենալով գյուղում տարվող տնտեսական-քաղաքական կամպանիաների աշխատանքներին, դեռ չեն կարողացել իրենց աշխատանքներն այնպես հարմարեցնել, վոր գյուղում առաջադրվող նորանոր պահանջներն ընդգրկվեն իրենց աշխատանքների շրջանակում: Այժմ, լերբ գավառների լիկվիդացիայի հետևանքով բոլոր շրջաններում ուժեղանում են ապարարատները, նրանց հետ միասին կազմակերպված են արդեն աշխատանքի բաժիններ, դրա հետևանքով հնարավոր կլինի հետագայում աշխատանքներն ուժեղացնել այդ ուղղութիամբ:


Աղյուսակ № 4

Աշխատանքների կողմից բույլատրված արտադրյալ աշխատանքներ

	Թուվատրված արտադրյալների թիվը	0/0-ով հաշվարկված խորհրդարանական մասնաժամբ	Ֆանի հոգու թիվը տարված արտադրյալի մասին	0/0-ով հաշվարկված խորհրդարանական մասնաժամբ
1926—27 թ.	53.079	—	3669	—
1927—28 թ.	39.702	74,79	4.400	119,92
1928—29 թ.	89.433	225,26	9026	205,13
1929—30 թ.	80.445	90,0	5582	61,8

№ 3 աղյուսակում պատասխանատվության լենթարկվածների քանակը նախավերջին տարուց հետո, 1929—30 թ. զգալի չափով ընկնում է. այս դրությունը գլխավորապես պիտի բացատրել նրանով, վոր մի կողմից աստիճանաբար մասնավոր սեկտորը չքանում է, և մյուս կողմից մեր հիմնարկ-ձեռնարկների գեկավարներն ավելի ուշադիր վերաբերմունք են ունեցել դեպի աշխրեհսրության և հավաքական պայմանագրերի կիրառման հարցերը, վոր

քին նպատակ է նաև արհմիությունների աշխատանքների ուժեղացումը տվյալ խնդրում: Ինչ վերաբերում է առհասարակ պատասխանատվության կանչվածների թվի աճման, անկասկած այդ արդյունք է՝ զբաղված ուժի և հիմնարկ-ձեռնարկների աճման: Աշխրեհսրության խախուռման պակասեցման, ինչպես նաև բանվորների ու հիմնարկ-ձեռնարկների պետերի միջև տեղի ունեցող կոնֆլիկտների արագ լուծման հարցերում խոշոր դեր են կատարել հիմնարկ-ձեռնարկներում գոյություն ունեցող աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները, մասնավորապես Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովները: Շնորհիվ արհմիությունների ու Աշխրդկոմատի մարմինների բացատրական, մաս-



Աշխրդկոմատի աշխատանքի առողջապահության լաբորատորիան ուսումնասիրում է Ղափանի պղնձահալուքի փասակությունները

ապական աշխատանքների (հատուկ խորհրդակցությունների, հրահանգչական դեկուցումների) և այդ ուղղութիամբ կուրս-դաւընթացքներ կազմակերպելու, ինչպես նաև մեր բանվորական լայն խավերի կուլտ-կրթական մակաբդակի բարձրացման, այժմ ԳԿՀ-ներն ավելի լավ են աշխատում, վորի հետևանքով պակասել է ծագող կոնֆլիկտների հոսանքը դեպի աշխատանքի մարմինները, վորովհետև բանվորի և հիմնարկ-ձեռնարկի պետի միջև առաջացող կոնֆլիկտի լուծման ձգձգումը նշանակում է դեռ վնաս բանվորների շահերին և հավասար է տվյալ հիմնարկ-ձեռնարկին



տնտեսապես ֆրասելուն և վարկաբեկելուն. պետք է այս ասպարիզում շարունակել ևլ ավելի ուժեղ աշխատանքներ տանել:

Վերջին, № 4 աղյուսակը տալիս է դրական պատկեր. Հնայած նբան, վոր 1929—30 տնտեսական տարում քանուծի ավելի մեծ կարիքի մեջ ենք լելել, քան վորեկ տարի, արտաժամյա աշխատանքների տակուան ընկնում է, և այդ բացատրվում է նբանով, վոր մի կողմից մեր հիմնարկ-ձեռնարկները տնտեսավարական դիտակցական վերաբերմունք և մյուս կողմից Աշխտակումտոր մարմիններն ավելի խիստ հսկողութուն են ունեցել:

Աւստանգի պատկանության մեջ ամենակարեոր բնագավառը կարելի յե համարել աշխատանքի առողջացումը, վորի հիմնական նպատակն է աշխատանքը դարձնել աշխատողի համար անփաս ու անվտանգ, վերացնելով այն բոլոր խոչընդոտները, վորոնք աշխատանքի ընթացքում փասակար ու բացատական ազդեցութուն են թողնում թե բանվորի առողջության և թե արտադրության վրա:

Յեթե հենց սկզբից դրվել բոլոր ձեռնարկների առաջ հիմնական շտապ առողջացման խնդիրը, հին կառավարութուններից ժառանգութուն փացած առանց այն ել քայքայված մանր-մունր արդյունաբերական ձեռնարկութուններից շատերն ի վիճակի չեն լինի կատարելու իրենց համար պահանջված անհրաժեշտ ծախսերը ու ստիպված պիտի դադարեցնելին իրենց գոյութունը: Ահա թե ինչու աշխատանքի մարմիններն սկզբի շրջանում զբաղված են գլխավորապես տարրական թերութունները վերացնելով: Ընթացիկ հետադոտութունների միջոցով հբապարակ ելին հանվում ձեռնարկներում աշխատանքի սանիտարական և տեխնիկական պաշտպանության ասպարիզում յեղած այն թերութունները, վորոնց վերացումն առաջնակարգ անհրաժեշտութուն եր և մեծ գումարներ չեք պահանջում, վորոնք վեր ելին տվյալ հիմնարկ-ձեռնարկների ուժերից: Հետագայում արդյունաբերության զարգացման, ամբացման ու վերակառուցման հետ գուզընթաց՝ աստիճանաբար զարգացել ու խորացել է նաև աշխատանքի առողջացման բնագավառը, ուժեղացել են արդ. ձեռնարկների հետադոտութունները, ավելացել է աշխպաշտպանության մարմինների խստութունը, ձեռնարկվել է արդեն աշխատանքի հիմնական առողջացման միջոցառումներին, համապատասխան կարգով փոխվել են նաև աշխ. մարմինների աշխատանքի ձեերն ու մեթոդները, պատահական հետադոտութուններից անցնելով խիստ ծբազրալին հետադոտու-

թյունների: Միաժամանակ ուժեղացել է նախնական հսկողութունը բոլոր՝ նոր արդ. ձեռնարկների, կառուցումների, հիմնական վերաշինությունների վրա. նախագծերը յենթարկվել են աշխպաշտպանության մարմինների (տեխ. և սան. տեսչության) կողմից նախնական քննության և հենց այդ նախագծերի մեջ մտցվել են այն փոփոխությունները, վորոնք անհրաժեշտ են գտնվել աշխատանքի առողջացման տեսակետից:

Աշխատանքի՝ պայմանների առողջացման համար կիրառվող և կիրառվելիք միջոցառումները պահանջում ելին ավելի զգալի ծախսեր, վորոնք տվյալ տնտ. մարմինն ի վիճակի չեր լինում կատարելու, յեթե այդ նրտ արդֆինպանի մեջ չեր նախատեսված: Այդ պատճառով աշխպաշտպանության մարմինները դեռևս 1926 թվին անցնում են պայմանագրային ձևին: Տարվա ընթացքում կատարվում են խորացբած հետադոտություններ բոլոր խոչոր արդյունաբերական ձեռնարկներում, յերևան հանելով բոլոր թերությունները: Մանր թերությունների վերաբերմամբ տեղն ու տեղը արվում են առաջադրութուններ նրանց անմիջական վերացնելու վերաբերմամբ (ընթացիկ կարգով), իսկ ավելի խոչոր թերությունների վերացումը համաձայնեցվում է տնտ. մարմինների հետ, դբա համար անհրաժեշտ գումարներ մտցվում են արդֆինպանների մեջ և վերջիններս հաստատելուց հետո կնքվում աշխատանքային պայմանների առողջացման պայմանագրեր, վորի մեջ մտցվում են այն բոլոր կոնկրետ միջոցառումները, վորոնք տվյալ տարում պիտի կիրառվեն տվյալ ձեռնարկում՝ աշխատանքի պայմանները բարելավելու համար:

Պայմանագրերի սիստեմին անցնելով՝ աշխատանքի առողջացման գործը խոչոր ու միջակ արդյունաբերական ձեռնարկներում դրվեց ավելի հաստատուն հիմքերի վրա: Այժմ, աշխ. առողջացման խոչոր միջոցառումների վրա, գոյութուն ունեցող ձեռնարկներում, ամեն տարի ծախսվում են հարյուր հազարներ, չհաշված այն խոչոր ծախսերը, վոր կատարվում են նույն նպատակով նոր կառուցվող ձեռնարկներում, և ընթացիկ մանր ծախսերը: Ըստ տարիների՝ պայմանագրերի կնքման կամպանիան ցուլց է տալիս № 5 աղյուսակը:

Ինչպես յերևում է այդ տվյալներից, 1929/30 թվին այդ նպատակի համար ծախսված գումարը 1927/28 թ. համեմատությամբ մոտ յերեք ու կես անգամ բարձրանում է, վորով ձեռք են բերվել մի շարք խոչոր նվաճումներ աշխատանքների առողջաց-

ման առաքելությունը: Այդ նվաճումներն ու բարեփոխությունները բոլորը հիշատակել աշտեղ անհնարին է. բերում ենք միայն մի քանի որինակներ:

1. Համարյա բոլոր արդ. ձեռնարկներում կահավորված են նոր կառուցված հատուկ հանգստի և ճաշի սենյակներ. մինչև այդ՝ բանվորները դադարի ժամանակ ուտում էին իրենց դադարահանների վրա, դադարի ժամանակ շարունակ մնալով ֆուսակար ող ունեցող արհեստանոցում:

Աղյուսակ № 5

Ալիսասանֆի պայմանների առողջացման
Ձեռնարկներ (նախատեսված գումարները)

Տարեթվեր	Ընդամենը նախատեսված է	Այդ թվում՝		
		Ապահովության տեխնիկայի	Վեճակային	Արդ. սանիտարիայի, ուժանդակ կառուցումներ
1927—28 թ.	248.200	20.000	36.243	191.957
1928—29 թ.	330.882	92.250	50.430	188.202
1929—30 թ.	773.155	194.780	255.758	322.617

2. Շատ ձեռնարկներում շինված են հանդերձարաններ բանվորների հագուստը պահելու համար: Ալիսվերդու և Ղափանի հանքերում շինված են՝ հանդերձարան-չորանոց, լողարան, ուր բանվորները հանքերից դուրս գալուն պես հնարավորություն ունեն լվացվելու կամ լողանալու, թողնելով իրենց կեղտոտած ու թաց շորերը և հագնելով իրենց վերնազգեստը, ազատվելով ալյուպիտով կեղտից, թաց շորով դուրս գալու ու մրսելու վտանգից: Նույն տիպի հանդերձարան-չորանոց, լողարաններ կառուցվում են կաշեզործարանում, Անի. Պեմզալում և այլն:

3. Կառուցված են բաղնիսներ Ալիսվերդու և Չանգեղուրի հանքերին և գործարաններին կից, «Արարատ» գործարանում և այլն:

4. Կառուցված են բոլոր վինտիլյացիոն հարմարեցումները, լեռնականի տեքստիլ կոմբինատի գործարաններում՝ արհեստանոցների ող մաքրելու—ֆուսակարությունները պակասեցնելու

համար. այդ կառուցումների վրա ծախսված են և պիտի ծախսվեն հարյուր հազարներ. բարձրված է վինտիլյացիոն շատ հանքերում: Կառուցված են և կառուցվում են վինտիլյացիոն հարմարեցումներ Պոլիգրաֆտեատի տպարանում, Հայպետհրատի յերկու տպարաններում, կաշեզործարանում, միխանիկական գործարանում, փայտամշակման գործարանում և այլն:

5. Կառուցված են կենտրոնական ջերմացման հրամարեցումներ Բամբակկոմի գործարաններում, փայտամշակման գործարանում, կաշեզործարանում և այլն:



Ղափանի լեռնահանքերի բանվորների նորակառույց բաղնիքը


6. Կառուցված է աշխատավայրերի ռացիոնալ լուսավորություն լին. տեքստիլ կոմբինատի գործարաններում, Բամբակկոմի գործարանում և տպարանում:

7. Բոլոր գործարաններում մեկուսացված են վտանգավոր ռեմններն ու մեքենաների արագ շարժվող վտանգավոր մասերը՝ դժբախտ պատահարները կասեցնելու համար:

8. Հանքերի բոլոր վտանգավոր աշխատանքներն ու աշխատանքի վտանգավոր տեղերը նույնպես ըստ հնարավորությունների անվտանգ են դարձված: Կառուցված են հանքերում (զեռես վոչ ամեն տեղ) հարմար սանդուխտներ, անցկացված է ելեկտրական լուսավորություն գլխավոր հանքային ստորերկրյա ուղիներում,

հանքերում կառուցված են ազատ անցքեր վազոնետկաներից պատուպարվելու համար, շինված են ավտոմատիկ փականքներ շախտաների բերաններին և այլն:

9. Մեխանիզացիայի յեն յենթարկված՝ աշխատանքներն անվտանգ ու անվտանգ դարձնելու համար՝ մի շարք արտադրողա-



Ղափանի Լենինգրդի № 1 շախտայի բանվորների նորակա-
ռույց հանդերձարան-վազարանը

կան պրոցեսներ գաճի, կարբիդի, ձեթ-ոճառ գործարաններում, նաև մասնակի մեխանիզացիայի յեն յենթարկված մի շարք խո-
շոր շինարարական աշխատանքներ:

Աշխատանքի պայմանների լրիվ առողջացման համար դեռ շատ բան է մնում անելու, ձեռնարկներում դեռ շատ թերություն-

ներ կան, վորոնք յենթակա յեն վերացման, բայց այսօր միան-
գամայն ակնհայտ է, վոր շնորհիվ աշխ. պաշտպանության ջան-
քերի (խնայի հասարակական և հաճախ տնտ. մարմինների ոժան-
գակությամբ) հիմնական բարեփոխություններ են մտցված աշ-
խատանքի պայմանների մեջ, հիմնովին ձեռնարկվել են դեպի լավը
ալը պայմանները, հնից այդ բնագավառում գլխի են հետքեր չեն
մնացել, չկան այլևս խոնավ, նեղվածք, խաբսույ, կիսավայրենի
աշխատանքի ձևերով ձեռնարկներ, նրանք կամ յենթարկված են
կապիտալ վերակառուցման կամ կառուցված են նորերը, վորտեղ
կիրառված են աշխատանքի առողջապահության և անվտանգու-
թյան տեխնիկայի հիմնական պահանջները:

3. ԲԱՆՎՈՐ-ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Մեզ մոտ բանվոր դասակարգը լինելով մեր տնտեսական-
քաղաքական կյանքի իշխողը, արդեն 10 տարի չէ, վոր այլևս
շահագործման յենթակա չէ: (Մասնավորների մոտ չեղած հատ ու
կենտ վարձու աշխատանք տանողներն ել արհմիությունների և
աշխատանքի մարմինների միջոցով բավաբար պաշտպանություն
են վաղելում, վոր մի դեպքում նրանց չգրկելով մեր հիմնական
բանվորական կազմերի իրավունքներից ու արտոնություններից):
Յեթե ցարական և դաշնակցական իրավակարգում բանվորին ան-
խնա շահագործում էին, կամ թե չէ բանվորն իր ուժն ստիպված
վաճառում էր մասնավոր սեփականատերին ու նրանց ներկայա-
ցուցիչներին, մեզ մոտ արդեն բանվոր դասակարգը պետականաց-
նելով արդյունաբերությունը, իր արամադրության տակ յեղած
միջոցներից պլանային կերպով վերցնում է իրեն աշխատավարձը,
բաժին թոգնելով սոցիալիստական կուտակմանը, առանց վորի
ժողանտեսությունը զարգացնել և նրա համապատասխան կարիք-
ները հոգալ ու առաջ շարժվել անհնարին է:

Յեղնելով այս հիմնական սկզբունքներից, Աշխտոկոմատը
լինիլյան կուսակցության գեկավարությամբ, արհմիությունների
ոգնությամբ ու աջակցությամբ, տարել և աշխատավարձի ճիշտ
քաղաքականություն:

Մինչև 1924 թվի փոփոխին ռեֆորմի կիրառումը մեզ համար
ավելի դժվար էր արտադրողականության և աշխատավարձի բարձ-
րացման նորմալ համաչափությունը պահպանել, այս դժվարու-

Թյունն զգալի չափով հարթվեց մեր վալլուտայի կայուն ու առողջ դրուժամբ։ Այս հարցի հետ առնչություն ունեցող մյուս կարևոր խնդիրը, հետամնաց խմբակների աշխատավարձի բարձրացման, նրանց բարձր աշխատավարձ ստացողներին մոտեցնելու և ճիշտ տարիֆիկացիայի յենթարկելու խնդիրներն էլին, վոր մեզ հաջողվեց 1928 թ. ընթացքում զգալի չափով լուծել։ Նախկին 17 կարգանոց 1 : 8 հարաբերականով տարիֆային ցանցի փոխարեն ընդունվեց բանվորների համար առանձին կարգ—հարաբերականով տարիֆային ցանց, ծառայողների համար առանձին, վարչկազմի համար առանձին, աշակերտության համար առանձին և այլն։ Այս վերջին տարիֆային ցանցերը միանգամայն հնարավորություն տվին ամեն մի աշխատավորական գրուպպայի, ինչ ճյուղում էլ նա աշխատելիս լինի, լրիվ ընդգրկել և ճշտիվ տարիֆիկացիայի յենթարկել, հաշվի առնելով նրանց արհեստն ու աշխատանքի ստաժը։

Աշխատավարձի կանոնավորման հետ կապված կարևոր հարցերից մեկն էլ մեր պետ-տեղական բյուջեների կայունացման, նրանց ծախսման խիստ զիսցիպլինան կիրառելու և ծառայողներին աշխատավարձը պետական չափավորման յենթարկելու աշխատանքներն էլին։ Մինչև 1928 թ., չեղբ պետչափավորումը դեռ չէր կիրառվում, այն ժամանակ վոչ միայն բյուջեներում նախատեսված աշխատավարձի ֆոնդերն էլին ծախսվում, այլ և գերատեսչություններն ըստ իրենց հալեցողության բյուջեներից գույացած խնայողությունն ու անգամ մյուս հողվածներից ծախսեր էլին կատարում աշխատավարձի վրա։ Կասկածից դուրս է, վոր նման անարխիկ դրուժությունը վերջին հաշվով թե ֆլաս եր տվյալ հիմնարկին և թե հենց իրեն աշխատավորին։ Բյուջեների իրացման գործում խիստ զիսցիպլինայի կիրառման և պետչափավորումն անցկացնելու հետևանքով հիմնականում կարողացանք մի կողմից հնարավորություն տալ ժողտնտեսության միջոցները ճիշտ և պլանային կերպով ծախսելու և մյուս կողմից վերացնելու ծառայողների աշխատավարձերի միջև գոյություն ունեցող այն անարխիկ անհամաչափ դրուժյունը, վոր գոյություն ուներ։ Աշխատավարձի պետչափավորման խոտիվ կիրառման աշխատանքները պետք է հետագայում էլ մեր ուղադրության կենտրոնը լինեն։ Դեռ այս ուղղությամբ կան թեբություններ. միատեսակ պաշտոնների համար գոյություն ունեն անհամաչափ դրուժքներ, և հիմնարկների պետերի կողմից տեղի չեն ունենում վորոշ խախտումներ և այլն։

Մյուս ամենակարևոր հարցը — այդ արդյունաբերական խմբերի աշխատավարձի հարցն է, վորը աշխատավարձի մեխանիկական բարձրացումով չի լուծվի. պետք է արտադրողականության բարձրացման հետ կապված բոլոր խոչընդոտները վերացնել, վորպեսզի արտադրողականության բարձրացման հնարավորությունների հետ զուգընթաց ապահովվի ինքնահոս աշխատավարձի բարձրացումը, այլ կերպ ինչպես անցյալում և յեղել, նույնպես էլ հետագայում պետությունն ստիպված պլախի լինի իր ընդհանուր միջոցներից բաժին հանելու։— հետ ընկած գրուպպաների աշխատավարձը մեխանիկորեն բարձրացնելու, վորը նորմալ չերեվույթ չե հենց բանվորի իսկ շահերի տեսակետից։

Ահա այդ հիշյալ բոլոր միջոցառումներով է, վոր խորհրդային Հայաստանում մենք կարողացել ենք աշխատավարձի և արտադրողականության բարձրացման համաչափ զարգացումը կիրառել, վորպիսին անհնարին է բուրժուական իրավակարգում։ Պետք է մատնանշված թեբությունները զլխովին վերացնելու միջոցով էլ ալելի առողջ և խիստ տարիֆային քաղաքականություն կիրառել։

Աշխատավարձի մասին գոյություն ունեցող դրուժյունը պատկերվում է № 6 աղյուսակով։

Այդ տվյալներն ապացուցում են այն, վոր մեր արդյունաբերության զարգացման հետ զուգընթաց նաև աշխատող բոլոր խմբերի աշխատավարձը նորմալ չափով բարձրանում է։ Այստեղ խոսք կարող է լինել շինարարական բանվորների աշխատավարձի արագ բարձրացման մասին։ Ավելի ուղադրության արժանի չեն լուսավորության և առողջապահական ասպարեզում աշխատողների աշխատավարձի բարձրացման հարցերը, իբրև հետամնաց խմբերի, և այդ վերջինների վրա հետագայում էլ պետք է շարունակել հատուկ ուղադրություն դարձնել։ (Տվյալ աղյուսակում չեն առանձնացրած բանվորության և տեխնիկական ցածր պերսոնալի աշխատավարձերը այն նկատառումով, վոր բարձր վարչատեխնիկական կազմն առանձին աղադրություն չէր կարող ունենալ, վորովհետև վերջինները շատ չնչին տոկոս են կազմում)։

Այն բոլորը, ինչ վոր կատարված է աշխատավարձի ասպարեզում, իհարկե դա բավական չե։ Ինչպես համապատասխան դիրեկտիվ մարմինների ու արհմիությունների, նույնպես նաև Աշխտոկոմատի մտահոգության առարկան բանվորի ռեալ աշխատավարձի հարցն է յեղել։ Բանվորի և ծառայողի աշխատավարձի

ուսել գրութիւնը պաշտպանելու և նրան բարձրացնելու ձևը, իհարկէ, միայն վերև հիշված բացաձակ թվերը չեն. կան և ուրիշ շատ միջոցներ. սխալված չենք լինի, յետե գրանցից մեկը համարենք սոցապահովագրութեան միջոցներից տրված ոգնութիւնը: Յուրա-

Աղյուսակ № 6

Մեկ բանվորի տարեկան միջին աշխատավարձը (ռուբլիներով)

	Աղյուսակ ընդհանուր մեջ	Շինարար- ական մեջ	Փոխադրու- թյան մեջ	Առևտրական և վարկային մեջ	Առգրասի և կրթ.-կրթ. մեջ	Առողջապահ- ական և անասնա- բուծ. մեջ	Այլ հիմնարկ- ներ
1925—26 թ.	502	512	516	646	505	552	—
1926—27 թ.	541	596	598	713	526	603	751
0/0-ով նախորդ տարվա համեմատությամբ	107,8	116,4	115,9	110,4	104,2	109,2	—
1927—28 թ.	630	741	767	730	650	676	843
0/0-ով նախորդ տարվա համեմատությամբ	116,5	124,3	128,9	102,4	123,6	112,1	112,3
1928—29 թ.	698	1049	868	745	712	792	852
0/0-ով նախորդ տարվա համեմատությամբ	110,8	141,6	113,2	102,1	109,5	117,2	101,1
1929—30 թ.	785	1.154	926	828	784	824	876
0/0-ով նախորդ տարվա համեմատությամբ	112,5	110,0	106,7	111,1	110,1	104,0	102,8

քանչյուր ապահովագրվածի տարեկան միջին հաշվով ընկնում է 1923 տնտեսական տարում 5 ռ. 74 կոպ., 1923—24 թ. 28 ռ. 72 կոպ., 1924—25 թվին 31 ռ. 72 կոպ. և այդպես շարունակ աճում է, 1929—30 թ. հասնելով 68 ռ. 63 կոպ.: Չենք խոսում մնացած՝ լուսավորութեան, առողջապահական, բնակարանային, կոմմունալ ծախսերի և այլ նման որդանների կողմից տրված ոգնութիւն-

ների և արտոնութիւնների մասին, ինչպես նաև սպառողական բանվորական կոոպերացիայի, բանվ. բնակարանային շինար կոոպերացիայի հսկայական աշխատանքների մասին, վորոնք վերջին հաշվով աշխատավարձը լրացնող աղբյուրներն են: Ռեալ աշխատա-վարձի հարցում ամենախոշոր դեր կատարողը անդամթերքների, ժողոնդի մատակարարման, լավ սպասարկման գործի կանոնավո-րումն է և մասնավորապես գների իջեցման աշխատանքները, վո-րոնց մասին մինչև այժմ կատարված աշխատանքները պիտի համարենք մինիմում և ավելի խորը ու հետևողական աշխատանք-ներ տանենք:

4. 7-ԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ

Հոկտեմբերյան հեղափոխութեան խոշոր նվաճումներից մեկն էլ Համամիութենական կենտրոնական 1927 թ. նոյեմբերի 15-ին ընդունած մանիֆեստն էր, վորը ամբողջ աշխարհին հայտարա-րեց ՍՍՀՄ-ի արդյունաբերութեան մեջ 7-ժամյա բանվորական որ կիրառուի մասին:

Սորհրդային Միութեան բանվոր դասակարգի ձեռք բերած այս հսկայական նվաճումը մի խոշոր քաղաքական ապտակ է վոչ միայն մեր յերկրում յեղած թշնամիներէի, այլ և կապիտալիստա-կան աշխարհի տերերի համար: Կապիտալիստական Յնվրոպայում մինչև 10—11 ժամ աշխատող բանվորն իր ձեռքին ունենալով այդ հսկայական զենքը՝ 7-ժամյա աշխատանքի հետևանքով, որ որի վրա ուժեղացնում է իր կոնվը և անկասկած վորոշակի արդյունքների հասնում:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր Հայաստանի բանվորն ու աշխատավոր գյուղացին էլ խորհրդային իշխանութիւնն էին հաս-տատել, հնարավոր յեղավ մեզ մոտ էլ ալդ մեծ նվաճումից ոգտը-վել: Դեռ 1928 թ. Աշխտողկոմատին կից կազմակերպվում է 7-ժա-մյա բանվորական որը անցկացնող Հանրապետական հանձնաժո-ղով և ալդ հանձնաժողովը նախորդ կազմելով իր հնգամյա պլա-նը, ինչպես նաև որացուցալին ցուցակը, սկսում է իր գործունեյու-թիւնը: Ահա նրա աշխատանքները:

1928—29 թ. 7-ժամյա բանվորական որվա անցել են

1. Կարբիդի գործաբան, թվով . . . 68 բանվոր
2. Լենինականի ջրաէլեկտրոկայանը . 36 »

Ընդամենը . 104 »

1. Գինու-կոնյակի գործարան «Արարատ», թվով 171 բանվ.
 2. Հայպոլիգրաֆի տպարան Յերևանում 128 »
 3. Յերևանի Հիդրոէլեկտրոկայան 46 »
 4. » կաշեգործարան 122 »
 5. Լենտեքստիլ կոմբինատ 3265 »
- Ընդամենը 3732 »

Այսպիսով 1928—29 թվում պլանը կատարվել է լրիվ, իսկ 1929—30 թվում նախատեսված արդեօնարկները 7-ժամյա բանվորական ուժի չեն անցկացվել Հայքամբակի ձեթ-ոճառ գործարանը և մեխանիկական գործարանը: Պլանի այսպիսի թերակատարում առաջ է յեկել նրանից, վոր ձեթ-ոճառ գործարանը մտցված էր պլանի մեջ իբր մշտական մի ձեռնարկութուն, մինչդեռ նա հուլիսի 1-ի պակասի պատճառով դեռևս աշխատում է իբրև սեզոնային (տարեկան 4—5 ամիս), իսկ սեզոնային հիմնարկները 7-ժամյալի չեն անցնում: (Այժմ այդ հարցը քննվում է վերադաս մարմիններում): Ինչ վերաբերում է մեխանիկական գործարանին, նա, համաձայն գոյություն ունեցող վորոշումների, պետք է անցներ 7-ժամյակի գործարանը գործի պեղելու ուղից, բայց վորովհետև նա լրիվ չէր փոխադրված նոր շենքը, իսկ մաս-մաս 7-ժամյակի անցնելը վատ կանդրադառնար արդյունաբերություն վրա, նրա անցումը հետաձգված է մինչև գործարանի բոլոր ցեխերը նոր շենքը փոխադրվելը: Այդ գործում խանգարիչ հանգամանք է հանդիսացել և վորակյալ բանուժի պակասը, վոր զգացվել է և զգացվում է գործարանում: Դրա փոխարեն Լենինականի Տեքստիլ կոմբինատի գործարանները 1930—31 թ. փոխարեն անցել են 7-ժամյակի 1930 թ. առաջին յեռամսյակում:

Ըստ այլանի պեժ է անցնեն 1931 թվին.

1. Զանգեզուրի պղնձի կոմբինատը և նոր կառուցումները.
2. Գաճի գործարանը Յերևանում.
3. Կրի գործարանը »
4. Վորձաքարի և մարմարի գործարանը Փամբակում.
5. Մարմարի մշակման գործ. Յերևանում.
6. Կոնգլոմերատների գործ. »
7. Յեմինտի գործարանը Դավալում.
8. Փայտամշակման գործ. Յերևանում.

9. Փայտամշակման գործարանը Իջևանում:
10. Ծծմբաթթվուտի գործ. Ալլահվերդում.
11. Պղնձի արջասպի գործ. »

1932 թվին.

1. Ալլահվերդու պղնձի կոմբինատը.
2. Անի-Պեմզայի գործ.
3. Ղարաքիլիսայի ցեխամիդի գործ.

1932—33 թվին

1. Ծծմբի կոլչեղանի հանույթը.
2. Շինարարություն մեջ խոշոր մեքենայացված աշխատանքները:
3. Մանր և վոչ ցենդալին ձեռնարկները, տեղալին գործկոմներին, ալլ և գերատեսչություններին պատկանող փոքր ձեռնարկներ:

Ընդհանրապես 5-ամյա պլանը կազմված է այն հաշվով, վոր 1928—29 թվին 7-ժամյակով պիտի աշխատեն 10. Հայաստանի բանվորությունը 39,6% (կատարված է), 1929—30 թ. 52,9% (դրա փոխարեն փաստորեն ունենք 78%), 1930—31 թ. 87,8%, 1931—32 թ. 95,9%, 32—33 թ. 100%, այսինքն հնգամյակի վերջում մեր յերկրի ամբողջ արդյունաբերությունը աշխատելու յե 7-ժամյա բանվորական ուժով 7-ժամյա բանվորական ուժն իր մեծ տնտեսական քաղաքական նշանակություն հետ միասին ունեցավ և իր դրական առողջապահական և կուլտուրական նշանակությունը: Յեթե այսօր բանվորն ունի ալլելի շատ ժամանակ իր կուլտուրական զարգացման և հասարակական հարցերով պարապելու համար, այդ բոլորը մեծ չափով հնարավոր է զարձնում 7-ժամյակը. սակայն պետք է ասել, վոր 7-ժամյակի անցած բանվորության կուլտ-կենցաղալին սպասարկումը մեզ մոտ դեռ թույլ է: Այդպիսին պետք է զրվի անհրաժեշտ բարձրություն վրա. ալլ կերպ թուլացրած կլինենք 7-ժամյակի խոշոր նշանակությունը:

Մինչև այժմ 7-ժամյակի անցած արդեօնարկներից ստացված նյութերը զալիս են համոզելու, վոր 7-ժամյակը տալիս է աչքի ընկնող տնտեսական եֆֆեկտ: Վերցնենք Հայտեքստիլ կոմբինատի տվյալները: 7-ժամյակին անցնելուց հետո ալնտեղ մենք ունեցել ենք հետևյալ ցուցանիշները (տվյալները վերաբերում են անցմանը անալիտիկ հետևող կլաբտալին): Մանվածքալին գործարանում մի ժամվա տեսակարար արտադրությունը բարձրացել

և 7⁰/₀-ով, սարքավորման պարագուրդները պակասել են 13,8⁰/₀-ով, պրոգուրները անհարգելի պատճառներով պակասել 12,3⁰/₀-ով, պրոգուրները հիվանդութեան պատճառով պակասել են 7,1⁰/₀-ով, բանուժի տեսակարար ծախսը (չհաշված աշկերտութեանը) պակասել է 3,3⁰/₀-ով: Նույնաման տվյալներ կան հյուսիսային և արևելքում գործարանների վերաբերյալ: Այս տվյալներն արդեն խոսում են 7-ժամյակի ոգտին, սակայն չպետք է մոռանալ, վոր այդպիսի ցուցանիշներ ստանալուն մեծ չափով նպաստել են գոր-



Լեռնագործ հարվածայինների մի խումբ՝ հարվածային հարտա-
րազետ Մ. Յուզբաշյանի հետ

ծարանում լայն ծավալ ստացած սոցմրցումն ու հարվածայնութեանը, ինչպես նաև աշխատանքների մեքենայացումը և ուսցիոնալացումը: Համարյա նույնը գոյութեան ունի նաև մյուս գործարաններում (Կարբիդ, Հայպոլիգրաֆի տպարան և այլն): Այդպիսով 7-ժամյակը հնգամյակի 4 տարում կատարելու ուժեղ դեմքերից մեկն է, և չնայած բոլոր տիպի ու տեսակի ուղղորտյունիստների կողմից բարձրացրած վայնասունին, նա իրեն արժանի տեղը գրավեց մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման գործում:

5. ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹ

Անընդհատ արտադրական շաբաթի անցնելու միտքը ծագել է դեռևս 1922 թվին, չեբբ ևՍՀՄ Կառավարական Հանձնաժողովը վերանայում էր Աշխատանքի Որենագրերը: Յեկերորդ անգամ այդ մասին խոսք է չեղել 1926 թվին մասնավոր կապիտալի դեմ կռվելու առթիվ կողմված հանձնաժողովում: 1927 թվին բանվոր ընկ. Տիսովի և ԺՏԳՆ-ի աշխատակից ընկ. Բապտոպուրտի կողմից նորից հաբց է հաբուցվում արդյունաբերութեան մեջ անընդհատ շաբաթ կիրառելու, սակայն այդ հաբցն իր վերջնական լուծումը ստացավ Սոբհուրդների Համամիութենական V համագումարում (ընկ. Լաբինի առաջադրութեամբ):

Անընդհատ արտադրական շաբաթը, բղիկելով մեր սոցիալիստական շինարարութեան և մասնավորապես հնգամյա պլանի անշեղ կիրառման նկղբունքից, մի հակայական քայլ է դեպի առաջ և մի գորեղ միջոց աչն տեսակետից, վոր հնարավորութեան է տալիս վողջ արդյունաբերութեան մեջ ունեցած մեքենաները լրիվ և լավ ոգտադործելու, սոցիալիստական շինարարութեան տեմպերն արագացնելու և, վոր գլխավորն է, արտադրողականութեանը բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու և ավելի մեծ թվով բանուժ ընդգրկելու արդյունաբերութեան մեջ: Անընդհատ շաբաթը խոշոր չափով նպաստեց նաև բանվորական մասսաների աշխատանքի պայմաններն առողջացնելու գործին: Բանվորն ու ծառայողը տարվա ընթացքում իրենց աշխատանքի ժամերն ու որերը ամբողջութեամբ պահպանելով նրանք 4 որ աշխատելով և մի որ հանգստանալով (հնգորյակ), կամ 5 որ աշխատելով, 6-րդ որը հանգստանալով (վեցորյակ). մի կողմից հանգստի ընդմիջումներն ավելի հաճախ են կատարում և ավելի առողջ գրութեան մեջ կլինեն, և մյուս կողմից նրանք իրենց հոգնած գրութեանը փոխանակ 6 որը մեկ անգամ, 4 կամ 5 որը մեկ վերականգնում են, ապա ուրեմն կարող են թե ավելի լավ և թե շատ արտադրել: Դրա հետ միասին բանվորն ունենալով ավելի շատ հանգստի որեր, ավելի շատ հնարավորութեաններ կունենա իր կուլտ-կրթական մակարդակը բարձրացնելու համար: Բանվորներն այդ բոլորը գիտակցում էին, և այդ գիտակցելու արդյունքն էր, վոր բանվորա-

Վան շրջանները հենց իրենք եյին դնում անընդհատ անցնելու խնդիրը:

Այդ հարցն իրականացնելու տեսակետից ել յետ չի մնացել Սորհրդային Հայաստանի աշխատավորութիւնը: Դեռ 1929 թվին հունիս ամսից աշխատել ե ժողկոմխորհին կից Կառավարական Հանձնաժողով և ԺՏԽ-ին կից Գերատեսչական հանձնաժողով, վորոնցից վերջինը մինչև այժմ շարունակում ե իր գոյութիւնը, իսկ Կառավարական Հանձնաժողովը սույն թվի ոգոստոսի 17-ին Ժողկոմխորհի վորոշմամբ վերակազմակերպվեց Աշխտկոմատին կից:

Ահա այդ ուղղութիւնը կատարած աշխատանքը՝ սկսած 1929 թվից:

Անընդհատ արտադրական շաբաթը կիրառված ե.

Ա. 1929 թ. քննացում՝

1. Հայկինոմիութիւն	252	բանվոր
2. Արթիկ-Տուֆ	840	»
3. Յերգես	56	»
4. Անի-Պեմզա	397	»
5. Յերևանի կարբիդի գործարան	86	»
6. Լենքանկոռայի հրուշակարան	55	»
7. Յերևանի հացի գործ.	148	»
8. Յերևանի հրուշակարան	60	»
9. Յեր. բանկոռայի յերշիկանոց.	9	»
10. Հայմետաքսի Յերևանի գործ.	217	»

Ընդամենը . . 2,120 բանվ.

Բ. 1930 թ. (առ 1-ն հոկտ.) քննացում՝

1. Ալլահվերդու կոմբինատ	1,860	բանվոր
2. Յերևանի փայտամշակման գործ.	256	»
3. Լեն. տեքստիլ գործարան	4,110	»
4. Լենգես	30	»
5. Յերևանի կաշեգործարան	161	»
6. Կարի գործ. Յերևանում	240	»
7. Լենքանկոռայի հացի փուռ	182	»
8. Լենշինարդի մարմառի գործ.	27	»

Ընդամենը . . 6,866 բանվ.

Գ. 1930 թ. 10-12-րդ ամիսների քննացում

1. Ջեթ-ռճառ գործ. Յերևանում	203	բանվոր
2. Հայպոլիգրաֆը Յերևանում	160	»
3. Լենգարեջրի գործ.	36	»
4. Լենփայտամշակման գործ.	102	»
5. Լենմեխանիկական գործ.	133	»
6. Դավալուի կրի գործ. (Լեռշինարդ)	90	»
7. Յերևանի գաճի գործ.	80	»
8. Փամբակի գրանիտի գործ.	180	»
9. Ղափանի կոմբինատ	1,678	»
10. Յերևանի բամբակազտիչ գործ.	42	»
11. Յերևանի մեխանիկական գործ.	280	»
12. «Արարատ» գործ.	144	»
13. Զաջուռի կրի գործ.	50	»
14. Յերկոմտրեստի գործ.	14	»
15. Յերկոմտրեստի գաճի գործ.	25	»
16. Դավալուի գաճի գործ.	8	»
17. » կրի գործ.	9	»

Ընդամենը . . 3,234 բանվ.

Դ. Մրագրվում ե 1931 թ. քննացում

1. Լենինականի Առարդի տպարան	49	բանվոր
2. » տոմետի գործ.	41	»
3. Յերկոմտրեստի գարեջրի գործ.	15	»
4. » լիմոնադի »	18	»
5. » տոմետի »	8	»

Ընդամենը . . 131 բանվ.

Անընդհատ արտադրական 6-որդա շաբաթի կիրառումը
 Երևանի քաղաքի և Երևանի մարզի 1929-30 թվում

1. Հայպետին	2,206	բանվոր
2. Բնակկոռամիութիւն	473	»
3. Ղաբրի վարչութիւն	806	»
4. Զորագետի շինարարութիւն	1,288	»
5. Քանաքեռուգես	470	»
6. Յերևանի 2-րդ հիդրոկայանի կառուց.	271	»

Ընդամենը . . 5,514 բանվ.

(Բնակչությունը Բաղրի հիշյալ տվյալները վերաբերում են միայն Յերևանին):

Հերի վարչության գծով անընդհատ արտադրական շաբաթը չի կիրառված այն կետերում, ուր բանվորական ուժի պակասը կազմում է: Վերև հիշված ցուցակներից բացակայում են նաև այն արդյունաբերական և շինարարական ձեռնարկները, վորոնց մասին առայժմ մեր ձեռքին տվյալներ չկան:

Անընդհատ արտադրական շաբաթի կիրառումը Յերևանի և Նիժնիակառն քաղաքների բնակչության համար 1929-30 թ.

1. Գրասենյակներ	217 աշխ.
2. Առևտրական խանութներ	880 »
3. Ճարտար-թեյարարներ	662 »
4. Վարսավորանոցներ	95 »
5. Մանկապարտեզներ	27 »
Ընդամենը	1,881 աշխ.

Կոտայքի մարզի ցանցերում անընդհատ չի կիրառված միայն այն կետերում, վորտեղ 1-ից մինչև 3 աշխատավորներ են:

Անընդհատ արտադրական շաբաթը կիրառված է նաև ՀՄՍՀ-ի ժողովրդական տնտեսության, կենտրոնական հիմնարկներում, բանկերում և դրամարկներում, ինչպես նաև արդյունաբերական հիմնարկներին սպասարկող մասնաշաղկի և այլ հիմնարկ-ձեռնարկներում:

Անընդհատ արտադրական շաբաթի կիրառումը արդյունաբերական ձեռնարկներում, ըստ վերադաս մարմինների վորոշումների, պետք է վերջացնել 1931 թ. ընթացքում:

Վերև հիշված տվյալներից պարզվում է, վոր վոչ միայն այդ հնարավոր է, այլ և կհանգուցի նաև ընդհանուր հիմնարկ-ձեռնարկներում կիրառել անընդհատը, վորտեղ այն անհրաժեշտ է բանվորական լայն խավերի սպասարկման տեսակետից: Դժբախտաբար ձեռքի տակ չկան անհրաժեշտ թվական տվյալներ, վոր հնարավոր լինեի առաջ մանրամասնորեն, թե ինչ անտեսական եֆֆեկտ է ունեցել անընդհատ շաբաթը արդյունաբերության մեջ: Միայն կերպով մի յեղու ուրիշակ. մինչև անընդհատ արտադրական շաբաթին անցնել տեքստիլ գործարանում բանվորի մեջին արտադրանքը հավասար էր 18 ու 6 կուպիկի. անընդհատին անցնելուց

հետո՝ 20 ու 85 կուպիկ. բանվորների թիվը ավելացել է մոտ 25 տոկոսով: Փայտամշակման գործարանը մինչև անընդհատին անցնելը արդյունավետ կատարել է 102,2%-ով, իսկ անցման հանրող լեռամայակում կատարումը հասել է 104,3%-ի (անընդհատ այս բոլորին նպաստել են սոցմրցումը, հարվածայնությունը և այլ միջոցներ): Չունենալով ինքնարժեքի իջեցման և այլ կարևոր մոմենտների մասին տվյալներ՝ կարծում ենք, վոր վերը բերված փոքրաթիվ տվյալներով ևս հնարավոր է համոզեցուցիչ գաղափար պատանալ այն մասին, վոր անընդհատի կիրառումը նույնպես մի խոշոր միջոց է մեր սոցիալիստական շինարարության առաջ տեմպերն ապահովելու համար:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը աշխատավորին աշխատանք առաջ մասին մտածող չկար: Հետևապես կազմակերպված աշխատանքի շուկայի (բոլոր կամ միջնորդ բյուրո) մասին խոսք անգամ լինել չէր կարող: Սակայն այս չի նշանակում, վոր նախկինում գործազրկություն չի յեղել. ընդհակառակը, աշխատանքի գոյություն է ունեցել մեծ չափերով թե մինչ իմպերիալիստական պատերազմը և թե առավել ևս 1917-20 թվերին: Գյուղում ծայր աստիճան շահագործումը հողազուրկ եր դարձնում էր վոր գյուղացուն, և նա բատրակի հետ միասին մեծ թվով գնում էր հարևան յերկրներն ու արտասահման աշխատանք փնտռելու: պակաս չէր նրանց թիվը նաև Հայաստանի նախկին անկազմակերպ շուկայում: այս կամ այն «բազար» — «մեյդան» աշխույժ դարձրած՝ հավաքվում էին նրանք և սպասում վարձուներին:

Յեթև վերցնենք դաշնակների տիրակալության 2½ տարվա շրջանը, ախտեղ արդեն ավելի յե աճում գործազրկությունը. քանի վոր այդ իշխանության ուր թալանն ու ավերակ եր տիրապետում, աշխատանքի կազմակերպման մասին խոսք անգամ չէր կարող լինել, ուստի որոտորե բազմանում էր անտեսապես քայքայված քաղաքի և գյուղի աշխատավորության անգործների բաՆակը:

Այս գրությունն ավելի յե խոտանում Հայաստանի խորհրդայնացման տարիներում, յերբ Ս. Հայաստանից գուրա այլ և այլ

վայրերի աշխատավորական տարրերը մի անհուն ձգտում են հանդես բերում խորհրդային Հայաստան գալու:

Այդ իսկ պատճառով խորհրդայնացման հենց առաջին որից Աշխտողկոմատը զուտ զբաղվում է աշխատանքի շուկան կազմակերպելով, կարգավորելով և Դաշնակցությունից ժառանգած այդ անգործների հսկա բանակին գործ տալով: Դա արտահայտվում է հենց նրանով, վոր 1920 թվի դեկտեմբեր ամսից մինչև 1921 թվի փետրվարի 17-ը իր «հաշվառման-բաշխման» բաժնի միջոցով 2978 մարդ աշխատանքի չի ուղարկում և հիշյալ ժամանակամիջոցում 1,821 հոգի յեկ ցուցակագրված են ֆուտ: Մինչև 1923 թ. ամբողջ աշխուկայի գործը տանում է Աշխտողկոմատն իր կենտրոնական ապալարատի միջոցով, 1923 թ. արդեն կազմակերպվում են աշխատանքի բորսաներ Յերևանում և ապա Լենինականում: Հետագայում, ըստ մեր ժողտնտեսության զարգացման թափի, աստիճանաբար լայնանում, ուժեղանում է աշխատանքի շուկայի ցանցը: Մինչև գավառների լիկվիդացիան բոլոր գավառներում կային աշխատանքի ցուցակագրման-մատակարարման կայաններ. ալժմ, բացի Յերևանի ու Լենինականի և Դարաքիլիսայի բորսաներից, կան նաև 6 խոշոր շինարարական արդյունաբերական կենտրոններում ցուցակագրման - մատակարարման կայաններ և 25 շրջաններում ել հատուկ աշխատանքի բաժիններ: Վորոնք այդ ֆունկցիաներն էլ են տանում: Խորհրդային Հայաստանի գործազրկության շարժման պատկերը լրացնում է № 7 աղյուսակը:

Այս թվերն ակնհայտի կերպով ցույց են տալիս, վոր սկսած 1928 թ. աստիճանաբար գործազուրկների քանակն ընկնում է: Առհասարակ պետք է ի նկատի առնել, վոր մեր բորսաներում քիչ չեն լեղել վոշ խակական գործազուրկներ, վորոնք վորոշ արտոնություններ (հարկային, բնակարանային, լուսավորության և այլն) ձեռք բերելու համար մի կերպ սողոսկել են բորսաները: Տվյալ դրությունն ապացուցվում է 1924 թ. գործազուրկների գտումով: Յերևանի բորսայում ցուցակագրված 4427 հոգուց գտման ներկայացել են միայն 1751 հոգի, վորից 920 հոգին ել գտվել են իբրև վոշ աշխատավորական տարրեր, աշխատանքի ստաժից գուրկ և ալն: Նույնանման պատկեր է տալիս 1929 թ. գտումը: Բորսաներում ցուցակագրված 4494 ստուգման յենթաբեկված գործազուրկներից գտվում են 1761 հոգի, վորոնց շարքերում կային մինչև անգամ ձայնազուրկներ: Ինչպես յերև-

վում է № 7 աղյուսակից, առ 1 հոկտեմբերի 1930 թ. բորսաներում կային ցուցակագրված 1,823 հոգի. հիմա այդ թիվն ընկել է մինչև 400, վորոնք մոտ որերս ամբողջությամբ կուղարկվեն աշխատանքի և ֆնացած մասն ել կտեղավորվեն զանա-

Աղյուսակ № 7
Աշխտողկոմատում ցուցակագրված գործազուրկների շարժումը

	Ա ը ս ո լ յ ու տ			% ց ո լ ն ա խ ո ռ զ տ ար վ ա հ ա մ ե մ ա ս		
	Տղա-մարդ	Կին	Ընդամենը	Տղա-մարդ	Կին	Ընդամենը
Առ 1 1—1923 թիվ	583	197	780	196,6	20,5	62,2
» 1 X—1923 »	2779	1490	4269	476,7	756,3	547,3
» 1 X—1924 »	1430	622	2052	51,5	41,7	48,1
» 1 X—1925 »	3302	1702	5004	230,9	273,6	243,9
» 1 X—1926 »	3967	2167	6134	120,1	127,3	122,6
» 1 X—1927 »	5693	2710	8403	143,5	125,1	137,0
» 1 X—1928 »	3340	1745	5085	58,7	64,4	60,5
» 1 X—1929 »	2483	1623	4106	74,3	93,0	80,7
» 1 X—1930 »	1145	678	1823	46,1	41,8	44,4

զան կուրսերում: Այդ թվի մեջ բավական խոշոր քանակ են կազմում կանայք:

Սակայն, չնայած այդ բոլոր դժվարություններին, թե իսկական գործազրկության և թե նոր գործ փնտռողների հսկայական թիվ կազմող աշխատավորներին, կարողացել ենք աշխատանքի ուղարկել, մի կողմից մեր ժողովրդական տնտեսության բանուժի մեծ պահանջի ու վորակավորելու շնորհիվ և մյուս կողմից

7-ժամյա բանվորական որ անցկացնելու և անընդհատ շարաթը կիրառելու միջոցով:

Աշխատողները գործազրկության դեմ պայքարելու կամ նրանց ոգնությունը ցույց տալու հարցում միայն աշխատանքի ուղարկելով չի բավականացել: Բորսաներում ցուցակագրված գործազուրկների համար 1923 թվից սկսած կազմակերպվել են հատուկ աշխատանքի կոլլեկտիվներ. հենց նույն թվին կազմակերպվել են ութ արտելներ, ընդգրկելով մոտ 100 մարդ: Այսպես, այդ կոլլեկտիվներն աստիճանաբար թե իրենց քանակով են աճում և թե ավելի կայունանում, դառնում անդեֆիցիտ փոքրիկ գործաբաններ և հանձնվում տնտեսական մարմիններին:

Աշխատողների վերաբերյալ յեղած աշխատանքը ցույց է տալիս հետևյալը.

Աղյուսակ № 8

Աշխատողների գործունեությունը

	1923—24 1925—26	1926—27	1927—28	1928—29	1929—30
Աշխատանքային արտելների և կոլլեկտիվների տարեկան թիվը	12	16	14	16	14
Նրանց մեջ գրառված գործազուրկների թիվը	155	482	303	389	270
Միջին որակյա աշխատավարձի չափը . . .	—	1-45	1-48	2-07	1-92
Տնտեսական մարմիններին հանձնված կոլլեկտ. թիվը	3	—	3	4	6

Ինչպես յերևում է թվերից, աշխատողները ընդգրկված բանվորների քանակը նորմալ կերպով չի աճում, և աշխատավար-

ձը, կարծես, ընկնում է: Նախ պետք է տեսլ, լոր այդ տատանվող դրուժյունը հետևանք է այն բանի, լոր աշխատողները աշխատողները մշտական բանվորներ չեն, այլ լորոշ շրջան աշխատելուց հետո նրանք կամ հանձնվում են տնտեսական մարմիններին կամ վերադառնում բոբսա. այդպիսի մի փոփոխական դրուժյուն ազդում է աշխատավարձի վրա. լորքան կոլլեկտիվը քիչ դրուժյուն ունենա իբրև այդպիսին, այնքան աշխատավարձը դանդաղ է աճում: Այնուամենայնիվ 1 ո. 45., 2 ո. 07 կ. և 1 ո. 82 կոպ.—դա գործազուրկի համար քիչ ոգնություն չի յեղել: Աշխատողների աշխատանքների վերակառուցման հետ միասին վերակառուցման են յենթարկվել և աշխրոբայի աշխատանքները: Աշխատանքի կոլլեկտիվներ այլևս գոյություն չունեն, և նրանց փոխարեն այժմ կազմակերպված են զպրոցարհետանոցներ բացառապես բանուժ պատրաստելու գծով:

Գործազուրկներին ոգնելու 2-րդ միջոցը լեղել է հասարակական աշխատանքների կազմակերպումը: Մինչև 1929—30 թվը այդ նպատակի համար ամեն տարի բաց են թողնվել բավականին խոշոր գումարներ, լորպիսիները ծախսվել են ճահիճներ չորացնելու, առուներ մաքրելու, անցկացնելու և այլ նման աշխատանքների վրա, ըստ լորում հնարավորություն է ստեղծվել աշխատանք տալու գործազուրկ բանվորների լորոշ խմբերին:

Աշխատողների կազմակերպման, հասարակական աշխատանքների և զանազան լորակավորման համար ծախսեր են կատարվել 1924—25 թ. 32.039 ո. 45 կ., 1925—26 թ. 69.237 ո. 37 կ., ապա բաբարնում է 27—28 թ. 116.313 ո. 03 կ., 28—29 թ. 95.902 ո. 90 կ., 29—30 թ. 93.339 ո. 59 կոպ. այստեղ, ինչպես յերևում է, 28—29 թվից սկսած գումարների քանակությունը պակասում է. սա բացատրվում է նրանով, լոր հասարակական աշխատանքների վրա, ինչպես և աշխատանքի կոլլեկտիվների վրա ծախսվող գումարները պակասեղվում են, և ի հանդիսում ուժեղացվում են բանուժի պատրաստման ֆոնդերը:

Ցերբորդ ոգնությունը գործազրկության՝ այդ նրանց սոցիալական ապահովագրության միջոցով նպատավորելն է, լորը նույնպես մեծ չափով թեթեացրել է գործազուրկների նյութական դրուժյունը—իսկ թե ինչ չափով այդ յերևում է վաբը բերվող № 9 աղյուսակից:

Այդ թվերը ցույց են տալիս, լոր վերջին տարիներում ապահովագրված գործազուրկների թիվն աճում է, բայց փաստո-

բեն այդ հետևանք և այն բանի, վոր մի կողմից սոցալադմարմինները տարեցտարի ավելի չեն ընդգրկում բանվորական մասսաներենց սպասարկումով, իսկ մյուս կողմից մեզ մոտ անախտնթաց կերպով աճում և կառուցող բանվորների թիվը, վորոնք, ինչպես հայտնի չե, աշխատում են սեզոնային և տարվա վորոշ ամիսները դառնում են սոցալադմարմինների նպաստ ստացողները:

Աղյուսակ № 9

Ապահովագրված գործազուրկների շարժումը

	1922—23	1923—24	1924—25	1925—26	1926—27	1927—28	1928—29	1929—30
Գործազուրկների միջին տարեկան թիվը	285	624	532	697	1279	2231	2637	2475
‰ ‰ նախորդ տարվա համեմատ. . .	—	218,9	85,3	131,0	183,5	174,4	118,2	93,9

1930 թ. նոյեմբերի վերջերից այդ ձևի ոգնությունը դարեցված է, բորսաներում լեղած փոքրաթիվ քանակով գործազուրկները հատուկ կուրսերի միջոցով վերապատրաստվում և ուղարկվում են աշխատանքի: Յեթե 1929—30 թվին Սոցալի կողմից նպաստ է տրված ապահովագրված գործազուրկներին 346423 ռուբլի, դրա փոխարեն 1931 թ. զանազան կուրսեր-դպրոցներ բացելու, մի խոսքով, բանուժ պատրաստելու նպատակի համար բաց և թողնվել Սոցալի գծով մեկ միլիոն ռուբլի, և մենք ստիպված ենք մարդիկ գտնել, թոշակ տալ նրանց, վորպեսզի նրանցից վորակյալ բանուժ պատրաստել:

Մեր առաջ դրված խոշոր հարցերից մեկն էլ այն է, թե ինչպես ենք բավարարում որ որի վրա աճող սոցիալիստական շինարարությունից բանուժի պահանջը: Այդ մասին հետևյալ պատկերն ունենք՝ բորսաների գործունեությունից վերաբերյալ (տես աղյուսակ № № 10—11):

№ 10 աղյուսակում յեղած աշխատաշարի և ուղարկման տրվյալները վերցված են աշխատանքում գոյութուն ունեցող ռեալիզացիաներից և վերջինների կողմից ուղարկված աշխատանքից: Այստեղ ամենից ուշագրավն այն է, թե ինչպես տարեցտարի (բացի 1926—27, 1927—28) մեծանում է բանուժի մատակարարումը:

Աղյուսակ № 10

Աշխատանքի կողմից բանուժի մատակարարում

Տ Ա Ր Ի Ն Ե Ր	Աշխատանքի առաջարկ	‰ ‰-ով նախորդ տարվա համեմատությ.	Ուղարկված է զործի	Առաջարկ է ուղարկվ. տոկոսը
1923—24 թ.	7734	—	3371	43,6
1924—25 »	7778	100,6	5255	67,6
1925—26 »	12161	156,4	3288	27,0
1926—27 »	16251	133,6	8409	51,7
1927—28 »	15639	96,2	16681	106,7
1928—29 »	16778	107,3	16824	100,3
1929—30 »	19251	114,7	22167	115,1

1929—30 թ. մատակարարումը առաջարկից ավելի լինելը պետք է բացատրել մի կողմից գործազուրկների մի քանի անգամ աշխատանքի գնալով և վերադառնալով բորսա և մյուս կողմից—դաշտային աշխատանքների շնորհիվ բանուժի հոսունությունը: Այս աղյուսակում գլխավոր տեղը զբաղեցնում են արդյունաբերական մշտավոր և այլն զբուսականները: շինարարական բանվորները քիչ տոկոս են կազմում, վորովհետև նրանց աշխատանքի ուղարկելը կատարվում է ցուցակագրական կայանների և վերբովկալի միջո-

ցով. Եղ ճանապարհով գործի են աշխարհկած մինչև 20,000 շին.
բանվորներ:

Վերադառնալի ճիշտ պատկեր ունենանք դարձադրելության և մեր
սոցիալիստական շինարարության շտաբման ընթացքի մասին,
քերուժ ենք հետևյալ ավյալնիւրը:

Unguentum N^o 11

Աւարտանքին պիտի աւարտանքի առաջարկը ինչ պահանջը

	1923—24	1924—25	1925—26	1926—27	1927—28	1928—29	1929—30
Աշխատանքի առաջարկ .	7734	7778	12161	16251	15639	16778	19251
Աշխատանքի պահանջ . .	3874	5304	4501	9504	16925	18457	2409
Պահանջի $\frac{0}{0}$ օժ. և աշխատանքի առաջարկի հանդեպ	50.1	68.2	37.0	58.5	108.2	110.0	168.3

Տվյալներին պարզվում է, վոր 32,409 բանավոր պահանջի
դիմաց աշխատանքի առաջարկ է չեղել 19,251: Այսպիսով ակներև
է դառնում, վոր մեր աշխ. շուկայի ցանցը, չունենալով ակներև
մեջ գործազրկության, այլևս ի վիճակի չէ հետադադրվել
գուրկներ տալ մեր ժողտնտեսությանը:

Նույն դրությունը գոյութիւն ունի ամբողջ Խորհրդային Միութեան ժողտնտեսութեան բոլոր ճյուղերում. սուր կերպով զգացվում է հսկայական բանումի պակասութիւն — հենց այս դրությունից յեղնելով է, վոր Միութեհական Աշխատանքի կոմիտե ապրիտը սույն թվի հոկտեմբերի 9-ի վորոշմամբ, առաջարկում է անմիջապէս գործազուրկներին գործի ուղարկել և գործազրկութեան նպաստի վճարումը դադարեցնել: Յիվ հոկտեմբերի 9-ի վորոշմանը հաջորդում է նոյեմբերի 5-ի լրացուցիչ հրահանգը, վորը առաջադրում է աշխատանքի բորսաները վերականգնել — վերա-

ծիւ աշդալխիւնները աշխատանքի կադրերի վարչութիւններին, վարոնք հիմնականում պետք եղբարովին նախաոր բանութի աղբյուրները ուսումնասիրելով, հայտնաբերելով և նրանց իրենց հաշի մեջ առնելով, ապա վերջիւններին ծրագրաշին կարգով պատրաստելով ու մատակարարելով մեր ժողանտեսութեանը: Կասկածից դուրս ե, Վոր աշխատանքի ընդունակ գործազուրկներին նպաստի դադարեցումն ու նրանց անհապաղ գործի գնելը, ինչպես և աշխ. բորտաներն աշխատանքի կադրերի վարչութիւններին վերածելու վորոշումները, համապատասխանում են մեր ամբողջ ժողովրդական տնտեսութեան բուռն վերելքի պահանջին. ալ կերպ չեր ել կաբող լինել, յերբ մեր ժողտնտեսութիւնը հսկայական կադրերի լրացուցիչ պահանջ ունի: Յնվ վերջապես այս բոլոր միջոցառումները կենդանի ապացուց եւ այն բանի, վոր խորհուրդներին չերկբում իսպառ վերացվում ե գործազուրկութիւնը, և այժմ մենք շատ մեծ դժվարութիւններն առաջ ենք կանգնած հսկայական հասկերի հաշիւը անութի պակասը յրացնելու գործում:

Նույնանման զբուծյուն և ապրում Սորհրդային Հայաստանը։
Շնորհիվ մեր արդյունաբերության զարգացման չտեսնված արագ
թափի, գյուղի սոցիալիստական վերակառուցման, հսկայական բը-
նակարանային և ալլ շինարարությունների, ինչպես նաև 7-ժա-
մյակի և և անընդհատի կիրառման հետևանքով, մեր լերերի առ-
բով աշխատավորական տարրերը, վորքան ել նրանք լինեն, ա-
ռանց զվարությունների ընդգրկվում են մեր ժողտնտեսության
մեջ։ Սրանից յեխելով և, վոր Աշխօղկոմատը իր 1930 թ. հոկ-
տեմբերի 25-ի վորոշման մեջ հայտարարում և,—մինչև Սորհրդա-
յին Հայաստանի 10-րդ տարեդարձը լիկվիդացիայի յենթարկել
գործազրկությունը Հայաստանում։ Յիվ այդ մեզ հաջողվում և.
այժմ մեր բուսանեբում ընդամենը մնացել են ցուցակազրկված
400 հոգի, վորոնց վորոշ մասը հիվանդներ և առհասարակ անաշ-
խատունակներ են և վորոշ մասն ել աշխատանքի ուղարկելու հա-
մար վորակավորում ենք զանազան դասընթացքների միջոցով, և
այդպիսով 10—15 ու հետո գործազուրկ բոլորովին չենք ունենալ։

7. ԲԱՆՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ-ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Այս հարցով համարյա թե մինչև 1928/29 թիվը Աշխատողու-
մատը չի զբաղվել (բացառությամբ դործադրվելու աշխա-
տանքային ոգնություն ցույց տալու համար արտադրական տիպի-
աշխատանքային կոլեկտիվներ կազմակերպելուց)։

Վերականգնման և հնգամյա պլանի կատարման ու գերակատարման շրջանները մեր առաջ սուր կերպով դրին կադրերի մեծ կարիքը: — Բոլոր մարմինների ու կազմակերպությունների շարքում նաև Աշխտողկոմատի աշխատանքի ձևերն ու մեթոդներն էլ հարմարվում են տվյալ շրջանի պահանջներին: Թե բանուժի պատրաստման ուղղությունը 1928/29 և 29/30 թվերի ինչ է կատարված, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը

Աղյուսակ № 12
Բանուժի պատրաստում 1928-29 յեվ 1929-30 թ.

Ըստ կարգի	Ա. Ր. Հ. Ե. Ս. Ն. Ե. Բ. Ի Ա. Ն. Ո. Ի. Ն. Ե. Բ. Ը	1928-29		1929-30	
		Ըստ պատրաստման	Վերականգնման	Ըստ պատրաստման	Վերականգնման
I. Շինարարական խմբակ					
1.	Քարտաշներ և քար կտրողներ	33	33	1100 մ.	1236 մ.
2.	Հյուսներ և ատաղձագործներ	30	30	250	283
3.	Բետոնագործներ—արմատուրչիկներ	40	40	150	166
4.	Շտուկատուրչիկներ	15	15	150	168
5.	Վառարանագործներ	12	12	—	—
6.	Տասնապետներ	—	—	—	26
7.	Շինուսի հրահանգիչներ	—	—	—	21
II. Մսավոր աւիւ. խմբակ.		130	130	1650	1900
1.	Հաշվային աշխատավորներ	—	—	33	95
2.	Դրամեքենագործներ	75	75	60	135
3.	Քրասնենկային աշխատողներ (գործավար, քարտուղար և այլն)	—	—	—	32
				93	262
III. Ինդուստրիալ խմբակ.					
1.	Շոֆերներ	50	20	30	30
2.	Տրակտորիստներ	—	—	30	35
3.	Կոնդուկտորներ	—	—	25	25
4.	Փարզավուչի կուրսերի պատրաստման	—	—	—	393
				85	483
		325	225	1828	2645

Բացի հիշյալ թվերից 1929/30 թվի ընթացքում նաև 295 հոգի պատրաստված են բրիգադային աշակերտության ձևով շին. մարմինների միջոցով: Վերջին լերկու տարիներում Աշխտողկոմատի գծով բանուժի պատրաստման համար ծախսված է 1928/29 թվին 63.622 ուրբլի, 1929/30 թվին — 385.986 ուրբլի: Ինչպես ցույց է տալիս № 13 աղյուսակը, փաստորեն 1929 թվին է, վոր Աշխտողկոմատը վորոշ շոշափելի աշխատանք է կատարել, նույնիսկ պլանը գերակատարել: Այստեղ աչքի յե ընկնում, վոր 2645 պատրաստվածների մեջ արդյունաբերական խմբակը կազմում է շատ չնչին թիվ (483 հոգի). սա պետք է համարել մեր աշխատանքների ասպարեզում խոշոր բաց և հետագայում պիտի ուժեղ բեկում առաջ բերել այս ուղղությամբ:

Նախատեսվում է 1931 թ. համար շինարարական բանվորների պատրաստել հետևյալ արհեստների.

Աղյուսակ № 13

Նախատեսված է պատրաստել շինարարական բանվորներ 1930-31 թ.

Արհեստների անունները		Քանակը
1.	Քարտաշներ	3000 մարդ
2.	Քար կտրողներ	600 »
3.	Բետոնագործներ	300 »
4.	Շտուկատուրչիկներ	200 »
5.	Հյուսններ և ատաղձագործներ	500 »
6.	Փականագործ. և ջրմուղագործ.	100 »
7.	Ասֆալտ-գուղրոնիստներ	100 »
8.	Հողափորներ	1500 »
Ընդամենը		6300 »

Իհարկե այս թիվն անցյալ տնտեսական տարվա համեմատությամբ մոտ 3 անգամ ավելի յե, սակայն յերբ վերցնում ենք մեր շինարարության աճման տեմպը, ելի յետ ենք մնում: Պետմեր շինարարությունը 1930/31 տարվա համար 17.574 շինարարականի հսկիչ թվերով 1930/31 տարվա համար 17.574 շինարարականի վորակյալ բանվորներ են պետք, ունենք հաշվի մեջ փաստացի 8120 բանվոր, մնում է դեֆիցիտ 9454, վորից մենք պատ-

րատելու չենք 4800 հոգի,-- և ելի մնում և 4654 վորակյալ բան-
վորների ղեկիցիա, վորը ծածկելու չենք շինարարության մեջ
մեքնալացում, ուղիորնալիզացիա մտցնելու, բրիգադային աշա-
կերտություն պատրաստելու և այլ նման միջոցներով:

Աշխտողկամատը շինարարական բարձր վորակի բանվորներ պատրաստելու համար 1930 թ. նոյեմբերից բաց է անում նաև յերկամյա զպրոցներ՝ մեկը Յերեւանում, մյուսը Լենինականում, 150 և 100 ուսանողներով։ Նաև ծրագրված է պատրաստել զանազան արհեստների մարդիկ։

Учтено № 14

Նախատեսված է բանուծ պատրաստել 1930/31 թ. հետեվյալ
արհեստների

	Արհեստների անունները	Քանակը
1.	Շոֆֆերներ	75 մարդ
2.	Տրակտորիստներ	200 »
3.	Դրասենեկաշին աշխատողներ	200 »
4.	Գրամփենագրուհիներ	150 »
5.	Տասնապետներ	50 »
6.	Ֆարգավուչի համար նախապատր. կուրսերում	560 »
	Ընդամենը	2236

Անկասկած, մոտ 10,000-ի հասնող բանուժի պատրաստումը մեր ժողովնտեսութեան հսկայական կարիքը չի լրացնելու, այդ թիվը մենք պիտի հասցնենք մինիմումը 15,000-ի, զլիսավորապես պատրաստելով արդէունաբերական բանուժ: Այժմ թե Աշխտզկոմաթը և թե համապատասխան մարմիններն զբաղված են այդ առ-
թիվ լրացուցիչ հատուկ ծրագիր մշակելով:

Այստեղ հնարավոր չե ցերկար խոսել այն մասին, վոր ան-
ցյալում հսկայական դժվարութիւնները և խոչընդոտները ցենք
հանդիպել այս աշխատանքը կատարելու, ընթացքում, ինչպես
կուրսերի, դպրոցների շենքերի ու հանրակացարանների, հուշն-
պես և կուրսերն ավարտող աշակերտութեան աշխատանքի տե-
ղավորելու և այլ նման հարցերի խնդրում: Այդ խոչընդոտները

Իլարելի յե արմատախիլ անեք յեթե Աշխոյեղեմատը, Կեննելով իր անցյալի փորձից, ալիլի լալ զնի աշխատանքները, և մյուս կողմից համապատասխան մարմինները, մասնավորապես տնտեսական-շինարարական կազմակերպություններն ել իրենց արժանի ուշադրությունը նվիրեն այդ կարևոր գործին:

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բանվոր դասակարգը տասնյակ տարիներ շարունակ պայքարելով բոլոր տեսակի շահագործումների դեմ՝ միշտ ել ձգտել ե միանույն ժամանակ ձեռք բերել նաև լրիվ սոցիալական ապահովագրություն։ Այդ մոչմի կապիտալիստական յերկրում չի հաջողվել և չի լել հաջողվի, մինչև բանվոր դասակարգն իր ձեռքը չվերցնի իշխանությունը և չհաստատի իր գիկտատուրան։ Խորհուրդների յերկրում բանվորների նյութական և առողջապահական կարիքները րոտցնող և նրա կենցաղը բարվոքող այդ հսկա գանձը—լրիվ սոցիալական սպանովագրությունը—մեզ տվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, պրոլետարիատի գիկտատուրան։

Կապիտալիստական լեքերներում, ինչպես և ցարական Ռուսաստանում, սոցապահովագրութան գաղափարն արտահայտու-
թյուն գտել և շնորհիվ բանվոր դասակարգի պայքարի, սակայն
նրա արդյունքները շատ աննշան են լիզել: Յեթե սոցապահովա-
գրության մեկ լեքիւ տեսակները գոյություն են ունեցել այն-
տեղ (հաշմանդամության և հիվանդության), նրանք՝ նախ՝ չեն
տարածվել ամբողջ բանվորության ու աշխատավորության վրա,
լեքերորդն ել՝ այդ պահովագրությունը յեղել և իրեն բանվորի
հաշվին և միշտ գտնվել և շահագործող դասի ձեռքին, այդ պատ-
ճառով ել նույնիսկ այդ չնչին, մեծ դժվարություններով ձեռք
բերված արտոնությունները լեղել են խայտառակ դրության մեջ:
Եւ իսկ իստեկ չարժեք, քանի վոր

Դաշնակցական Հայաստանի մասին խոսելի նպատակով, քանի որ զինա, տարված լինելով իր թալանի քաղաքականությունով, Հի կիրառել Ռուսաստանի՝ այդ ասպարեզում գոյություն ունեցած խղճուկ ուրենքներն անգամ: Խնամատարություն մինիստրությունը «բարեգործություններով» և զբաղվել միայն:

Յեթի այսօր խորհրդային Հայաստանի բանվորությունը և ամբողջ աշխատավորությունը վայելում է այդ մեծ արտոնությունը, նրա լրիվ կերպով ոգտվում սոցիալական ապահովագրությունից, ապա այդ իրավունքը նա ձեռք է բերել իր շնորհիվ, տալալիով

Սոցալմարմինների մուսր լել լելը (ուսլլնելը)

Տարիներ	Ընդամենը մուսր		Մուսրի բաշխում բուս ճանրեր				Ծախքն բուս սոցալ-մարմինների ճանրի	
	Բացառալի	Ընդամենը մուսր	Բաժնի մուսր		Կենտրոնացված		Բացառալի	Ընդամենը մուսր
			Գնդին	Զուգին	Գնդին	Զուգին		
1922-23	69830	—	—	—	—	—	54.238	77,7
1923-24	475324	680,7	137,147	—	—	—	333.872	98,7
1924-25	788920	166,0	232,480	—	—	—	549.826	109,8
1925-26	1518405	192,5	373,974	160,9	108868	195,7	1201.621	116,0
1926-27	2451627	161,5	506,260	135,4	316757	291,0	1737.182	106,7
1927-28	3177761	129,6	664,445	131,2	507188	160,1	2201.077	109,7
1928-29	4016418	126,4	726,763	109,4	619165	122,1	2681.736	100,4
1929-30	5197875	129,4	1173400	161,5	1012900	163,6	3204.800	106,4

Լ ր ա ց ու ց ի չ ն պ ա ս ն ե ռ .

Տարիներ	Ճեղքված ուղիս համար		Ճեղքված ուղիս համար		Ճեղքված ուղիս համար		Ճեղքված ուղիս համար	
	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար	Ճեղքված ուղիս համար
1922-23	1.150	8.870	—	—	—	—	155	990
1923-24	2.066	17.819	200,9	36.483	378,2	378,2	595	5.587
1924-25	3.838	52.534	294,8	90.040	246,8	246,8	966	15.138
1925-26	5.160	111.744	212,7	190.820	211,9	211,9	1.800	49.139
1926-27	4.651	111.883	100,1	40.455	127,5	127,5	1.761	43.300
1927-28	5.539	135.863	124,1	40.613	102,7	102,7	1.851	32.567
1928-29	6.102	139.546	102,7	42.292	99,5	99,5	2.303	37.412
1929-30	6.415	142.600	102,2	44.597	104,3	104,3	2.448	40.800

Այստեղ յերեխաների ոժիտի համար բաց թողնվող նպաստը տարեցտարի աճելով՝ 1929-30 թվ. հասնում է 142000 ուրբու, յերեխաների սննդին՝ 259.307 ուրբ., թաղման 40.800 ուրբի, այս թվերից պարզ յերևում է, վոր ծախսերի գումարները բացարձակ կերպով զգալի չափով աճում են, բացի թաղման նպաստի գումարից, վորը, պետք է ասել, հետևանք է բացառապես մեր իրավակարգի բարենպաստ պայմանների:

Սոցապահովագրութան մարմինները հսկայական գումարներ են բաց թողնում ժամանակավոր անաշխատունակության նպաստ տալու համար, վորը յերևում է հետևյալ աղյուսակից:

Աղյուսակ № 18

Ժամանակավոր անաշխատունակության նպաստներ

Տարիներ	վարձատրվ. հիվանդ ուրբ. ընդհան. թիվը:	Նրանց բաց թող. նպաստի գում.	Օ/Օ 0/0-ով նախորդ տարվա համեմատութ.	Ուրական նպաստի միջին չափը	Օ/Օ 0/0-ով նախորդ տարվա համեմատութ.
1922-23	19.632	11.914	—	61	—
1923-24	61.370	79.396	666,4	1-29	211,5
1924-25	129.049	174.472	219,7	1-35	104,7
1925-26	179.801	342.693	196,4	1-91	141,5
1926-27	199.158	435.107	127,0	2-18	114,1
1927-28	207.416	454.365	104,4	2-19	100,5
1928-29	298.494	730.154	160,7	2-45	111,9
1929-30	417.115	1.121.710	153,6	2-69	109,8

Աղյուսակն ակներև ցույց է տալիս, վոր այդ նպատակի համար տրվող գումարներն սկզբնական տասնյակ հազարներից անցել են և այժմ արդեն միլիոնից ավելի չեն: Յեթե հիվանդի որերը

թիվն աճում է, այդ պիտի վերադրել ապահովագրվածների թվին աճմանը, իսկ նպաստի միջին չափն արդյունք է միջին աշխատավարձի բարձրացման: Անշուշտ այս դուրսթյունը ժամանակավոր աշխատանքից ազատվող հիվանդների լրիվ և լավ ընդգրկման և սպասարկելու տեսակետից դրական կողմ է, սակայն ինչպես նույն աղյուսակում տոկոսային հարաբերությամբ ցուցահանվում է, իջեցման վորոշ շանսեր կան. մենք պետք է այդ ուղղությամբ ձգտենք մի կողմից՝ ավելի ուժեղ աշխատանք տանելու աշխատանքի պայմանների առողջացման, տեխնիկական անվտանգության հարցերը կանոնավորելու համար և մյուս կողմից դեռ գոյություն ունեցող սիմուլացիայի դեմ խիստ պայքար մղենք:

Անուհետև ուղադրության արժանի յի գործադրելության դեմ պայքարելու հարցում ցույց տրված սոցիալական ապահովագրության ոգնությունը, վորը յերևում է հետևյալ աղյուսակից:

Աղյուսակ № 19

Գործադրության նպաստ

Տարիներ	Գործադրվ. կրթության համար նպաստ տրվ. մարդ. ամիսների թիվը:	Նրանց բաց թող. նպատի գում.	Օ/Օ 0/0-ով նախորդ տարվա համեմատութ.	Ամսական նպատի միջին չափը	Օ/Օ 0/0-ով նախորդ տարվա համեմատութ.
1922-23	Տեղեկ. չկա	6.700	—	—	—
1923-24	4.659	29.265	436,8	6-28	—
1924-25	4.684	29.965	102,4	6-40	101,9
1925-26	6.520	57.398	191,6	8-80	137,5
1926-27	9.742	130.390	435,1	13-38	152,0
1927-28	24.349	345.789	265,2	14-20	106,1
1928-29	32.811	493.157	142,6	15-03	105,8
1929-30	22.278	346.423	70,2	15-55	103,5

հետևյալը, 1927-28 թ. ապահովագրված էլիյն 2.577 հոգի, 1928-29 թվին 2.917 և 1929-30 թվին 4.336 հոգի: Տրված են զանազան նպաստներ ժամանակավոր անաշխատունակության համար 1928-29 թվին 2.617 ուսուրի 23 կոպ., 1929-30 թվին 4.468 ուսուր. 73 կոպ.: Գործազրկության նպաստ նույն տարիների համար, առաջին տարին 186 ուսուրի 5 կոպ., վերջին տարին 18.220 ուսուր. 51 կոպ.: Լրացուցիչ նպաստ 50 ուսուրի, 2-րդ տարում 1.883 ու. 82 կոպ.: Կենսաթոշակ 148 ու., մյուս տարին 1.053 34 կ., նաև նույն ժամանակամիջոցում կենսաթոշակ ե նշանակված բատրակների, վորպես աշխատանքի անկար և մահացածի ընտանիքի 32 հոգու: Սանատորիաներ ուղարկված են բատրակներ՝ 1928-29 թվին 6 հոգի, հանգստյան տներ 26 հոգի, 1929-30 թ. սանատորիա 30 հոգի, հանգստյան տներ 120 հոգի: Մինչև գավառների լիվիդացիան մի քիչ թույլ էլիյն բատրակների ապահովագրության աշխատանքները, այն ժամանակ գավառային սոցալպմարմինների և հատուկ լիազորների միջոցով եր սպասարկվում այդ գործը, այժմ բոլոր շրջաններում աշխատանքի բաժիններ և սոցալպմարմիններ կան և հնարավոր ե ու պետք ե բատրակների սոցալպահովագրության սպասարկման գործը դենև իր բարձրության վրա:

Մի կողմից մեր բանվորական լայն մասսաների անցյալի սոսկալի զրկանքներն ու ֆիզիկական հյուժվածությունը դարձանելու և մյուս կողմից մեր նոր ծաղկող ու բարգավաճող սոցիալիստական շինարարությունը գլխավորելու, ստեղծագործելու համար մեզ պետք էր լրացուցիչ միջոցներ ձեռք առնել, բանվորին յերկար ժամանակ տալ՝ առողջանալու, հանգիստ ստանալու, առանց վորևե առուբայա հոգսերով մտահոգվելու: Խորհրդայնացման սկզբի տարիները (մինչև 1923 թ.) հնարավոր չէր անմիջապես հանգստյան տներ կառուցել. հաջողվում էր միայն կարիք ունեցող բանվոր-ծառայողներին ուղարկել Խորհրդային Միության զանազան վայրերում գտնվող սանատորիա-կուրորտներ, վորոնց թվում նաև մեր Դիլիջանի սանատորիան: Նախկին կալվածատերերի, կապիտալիստների քմահաճույքների ու շռայլ կյանք վայելելու համար կառուցված հսկա շենքերը գրավվում և հանձնվում են բանվոր դասակարգի տրամադրությունը՝ իբրև հանգստյան և առողջացման


վայրեր: Թե ինչ աշխատանք ե կատարված այդ ուղղությամբ, ցույց ե տալիս հետևյալ աղյուսակը:

ՍԱՆԱՏՈՐԻԱՆԵՐ յԵՂ ԿՈՐՐՈՏՆԵՐ ՈՂԱՐԿՎԱԾՆԵՐ

Այս թվերից չեղևում է, վոր պարբերաբար ընկնում ե ծառայողների թիվը և ալելանում ե բանվորներինը։ Սակայն այդ բուրգների թիվը և ալելանում ե բանվորներինը։ Սակայն այդ բուրգների թիվը և ալելանում ե բանվորներինը։ Սակայն այդ բուրգների թիվը և ալելանում ե բանվորներինը։

առաջվա նման 5 շաբաթ բժշկվելու ժամանակամիջոց տալու, այդ ժամանակամիջոցը յերկարացվում է մինչև 50 օր:

Սանատորիա-կուրորտների գործի լայնացումը Սորհրդային Հայաստանում հետզհետե ստանում է լայն ծավալ. հետագայում Դիլիջանի սանատորիան լայնանում է, 1926 թվին բացվում է




Ղարաբլիսայի հանգստյան տան ընդհանուր տեսարանը

Արզնին: Այժմ Դիլիջանում միլիոն ուներու հասնող գումարով նոր շքեղ սանատորիա չե կառուցվում, վոր ընդգրկելու յե մինչև 100 մահճակալ և կավարտվի 1932 թ. ընթացքում:

Բանվոր դասակարգի համար հանգստյան տներ հիմնելը հա-

տուկ է միայն խորհրդային իշխանությանը: Յեթե այս հարցում Սորհրդային Հայաստանը քիչ ուշացել է, այդ բացատրվում է վերջին իմպերիալիստական ազգամիջյան պատերազմներով, ինչպես նաև Վրացյանի գլխավորութամբ դաշնակցական ավանտյու-




Ղարաբլիսայի հանգստյան տան № 1 շենքը

րայով (վորն սկսվեց 1921 փետրվարին, վերջացավ ապրիլի 2-ին) փորոնք ավելի քաղաքացիներ չեղկիրը:

Կասկածից դուրս է, վոր խորհրդային իշխանությունը վերջնականապես ամբապնդվելուց հետո մեր առաջ զբված էյին ել ա-վելի լուրջ, ել ավելի բարդ ու հրատապ խնդիրներ, վորոնք կապ-

ված եյին աշխատավորութեան շահերի բավարարման և մեր յերկրի քայքայված տնտեսութիւնը վերականգնելու հետ. պետք երաւաջին հերթին լուծել այդ խնդիրները:



Ծաղկաձորի հանգստյան տան շէնքերից

1922 թվից սկսած արհեստակցական միութիւններում ծագում և հանգստյան տներ կազմակերպելու միտքը և նրանց կողմից 1923 թվի սկզբից հանձնարարւում և Հանրապետական Սոցալաւարմին



Սեանի կղզին—այժմ հանգստյան տուն

կազմակերպելու այդ դործը: Ահա հենց 1923 թվի սկզբներում արհմիութիւնների այդ հանձնարարութիւնը կատարւում է:

Առաջին հերթին Ծաղկաձորի (Դարաչիչակ) նախկին նա-

հանգապետի բնակարանը վերանորոգելով՝ բաց է արւում առաջին հանգստի տունը 33 մահճակալով: 1924 թ. ապրիլին տեղի ունեցած արհմիութիւնների 3-րդ համագումարը լսելով այս առթիվ զեկուցում, առաջադրում է ավելացնել մահճակալների թիւը՝ հասցնելով այն վոչ պակաս 60-ից: Նույն 1924 թվին բացւում է Ծաղկաձորում 2-րդ հանգստի տունը, մահճակալների թիւը հասցնելով 65-ի: Յեւ այսպես շարունակ, 1925 թվին բացւում են ևս 3 հանգստի տներ՝ Ղարաքիլիսայում, Գորիսում, Ծաղկաձորում. 1929-30 թվից արդեն բացվեց Սեանի հանգստի տունը. լայնացված են վերոհիշյալ տները և ներկայումս մահճակալների թիւը հասնում է 250-ի: 1930-31 թվի համար նախատեսւում է լայնացնելու, վերանորոգելու միջոցով մահճակալների թիւը հասցնել 370-ի: Ներկա 1930 թվին բաց է արւելու Յերևանում նաև միութայ բանվորական հանգստի տուն (վորպիսի 4 որբ, 5 որբ մեկ անգամ հանգստացող բանվորն իր հանգիստը այնտեղ անցկացնի): Այդ նպատակի համար 1931 թվին հատուկ շէնքեր են կառուցւելու՝ մեկը Յերևանում, մյուսը Լենինականում:

Թե ինչպիսի հսկայական նշուլթական, առողջապահական և կուլտուրական եֆֆեկտ են տվել և տալիս հանգստյան տները, այդ մասին մենք աշխատավարձի մասում բերինք վորոշ տվյալներ, մնացածը թողնում ենք մեր բանվորական լայն մասսաներին, վորոնք լեղել են հանգստյան տներում: Մեզ փնում է եւ աւելի ուժեղացնել այդ աշխատանքները, վորոնց կարիքը որ որի վրա մեծանում է: Տալիս ենք հանգստյան տներ ուղարկվածների աղջուսակը:

Աղյուսակ № 22

Հանգստյան տներ ուղարկւածները

Տ Ա Ր Ի Ն Ե Ր	Հանգստյան տներ ուղարկւածները					
	Ա բ ս ո լ յ ու տ			°/° 0/0-ով		°/° 0/0-ով նախորդ տարվ. հա- մեմատու- թյամբ
	Բանվոր- ներ	Ա յ լ	Ընդա- մենը	Բանվոր- ներ	Ա յ լ	
1922-23 թ.	Տեղեկ. չկա	Տեղեկ. չկա	49	—	—	—
1923-24 »	Տեղեկ. չկա	Տեղեկ. չկա	358	—	—	730,6
1924-25 »	448	318	766	58,5	41,5	214,0
1925-26 »	507	475	982	51,6	48,4	128,2
1926-27 »	707	500	1.207	58,6	41,4	122,9
1927-28 »	911	519	1.430	63,7	36,3	118,5
1928-29 »	1.356	603	1.959	69,2	30,8	137,0
1929-30 »	2.560	640	3.200	80,0	20,0	163,3

10. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մի քանի խոսքով արժե նաև կանգ առնել մեր գծով յեղած հրատարակությունների վրա, վորոնք խոշոր նշանակություն են ունեցել աշխատանքի որենադրության, սոցիալական ապահովագրության մասնայականացման գործում: Բացի այդ ունենք նաև պարբերական ամսաթերթ, վոր նույն նպատակին է ծառայում և, յեղնելով մեզանում նկատվող պահանջից, շուտով վեր է ածվելու «Աշխ. Տեղեկատու»-ն յերկշաբաթյա ժուրնալի: Չնայած մինչև այժմ հրատարակվել են 31 բրոշյուր-գրքուկներ, բայց պետք է արձանագրել, վոր աշխատանքի այս կարևոր ասպարեզում ավելի քիչ բան է կատարված, քան անհրաժեշտ էր: Անկասկած այդ ուղղությամբ ել պետք է լարենք մեր ուժերը՝ վերացնելու նկատվող բացը: Ավելորդ չենք համարում ստորև բերելու մեր հայերեն հրատարակությունների լրիվ ցանկը:

1. Կոնֆլիկտներ լուծելու կարգը 1929 թ.
2. Ի՞նչ է աշխատանքայինությունը 1930 թ.
3. Գն. - Կոնֆլ. հանձն. կանոնադրություն 1924 թ.
4. Սորբրդային սոցիալական ապահովագրություն 1923 թ.
5. Բանվորների ապահովագրությունը, վորպես դասակարգային պայքարի արդյունք 1923 թ.
6. Բանվորական ապահովագրական շաբաթումը 1923 թ.
7. Ո՞ւմ ընտրել ապահովագրական գանձարկի կոմիտեյի անդամ 1923 թ.
8. Ի՞նչ է տալիս բանվորին սոցիալական ապահովագրությունը 1924 թ.
9. Սոցիալական ապահովագրության տեղեկատու ուղեցույց 1925 թ.
10. Սոցիալական ապահովագրություն 1925 թ.
11. Աշխատանքի հաշմանդամների ապահովությունը 1925 թ.
12. Բանվորների և ծառայողների ապահովագրումը հաշմանդամության դեպքում 1925 թ.
13. Ի՞նչ է լրացուցիչ նպաստը և ի՞նչպես պետք է ստանալ 1926 թ.
14. Ո՞վ է աշխատանքի հաշմանդամ և ի՞նչպես պետք է թողակ ստանա 1926 թ.

15. Ի՞նչպես պետք է աշխատանքի անկաբը վերականգնեցնի իր աշխատանքի ստաժը 1926 թ.
16. Ի՞նչ է ժամանակավոր անաշխատունակությունը և ի՞նչպես պետք է նպաստ ստանալ 1926 թ.
17. Բանվորունին ու ապահովագրությունը 1926 թ.
18. Հաշվետվություն ՀՍԽՀ Աշխատանքի Ժողովրդական Կոմիտեարխատին առնթեր սոցիալական ապահովագրության վարչության 1—10 1924 թ. 1—10 1925 թ.
19. Պրոֆ. գրագիրություն 1926 թ.
20. Հանգստյան տներ, սանատորիաներ, կուրորտներ և ապահովագրվածների առողջությունը 1927 թ.
21. Ինչ՞ով են ապրում ապահովագրական մարմինները 1927 թ.
22. Վորոշում ԽՍՀՄ ԿԻԿ և ԺԿԽ դյուղացիական տնտեսություններում վարձու. աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին 1928 թ.
23. Սոցապահովագրական ասպարեզում սիմուլյացիայի դեմ պայքարելու անհրաժեշտությունը և միջոցները 1928 թ.
24. Արհեստակցական միությունները և սոցիալական ապահովագրությունը 1928 թ.
25. Բատրակների սոցիալական ապահովագրության մասին նոր որենք 1929 թ.
26. Հաշմության և նեցուկը կորցնելու դեպքում սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու կանոնները 1929 թ.
27. Ի՞նչ պիտի իմանա բատրակը սոցիալական ապահովագրության մասին 1930 թ.
28. Կանոններ. դյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին 1930 թ.
29. Հիմական կանոններ սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու մասին: (Առ 1930 թ. թյան կարգով ապահովելու մասին: (Առ 1930 թ. հունվարի 1-ը տեղի ունեցած փոփոխություններով). 1926 թ.
30. Աշխատանքը Հայաստանում 1923-27 թ. 1926 թ.
31. Աշխատանքը և արդյունաբերությունը Հայաստանում (վիճակագրական տեղեկատու) 1930 թ.

11. ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Այս հիմնական աշխատանքները, վոր կատարված են արհեստակցական կազմակերպությունների և պետական աշխատանքի պաշտպանություն մարմինների կողմից, դեռ բավարար չեն։ Բանավորական լայն խավերի աշխատանքի պաշտպանության հարցերի կանոնավորման և լավ սպասարկման ասպարեկում մեր աշխատանքներում դեռ կան հսկայական թերություններ, վորոնք պետք է ձգտել հիմնովին վերացնել։ Մեր սոցիալիստական շինարարություն արագ վերելքի հետ միասին՝ վերակառուցվում են և Աշխատողկոմատի աշխատանքների ձևերը և մեթոդները, որ որի վրա աշխորհնադրության մեջ նորանոր բարեփոխումներ են մտցվում, քանի գնում Աշխտողկոմատի վրա ավելի դժվարին պարտականություններ են դրվում։ Այդ տեսակետից է, վոր չպետք է բաժանանալ աշխատանքի հին մեթոդներով, աշխորհնադրության հսկողության խնդրում լուր հրաժաններ արձակելով կամ պատասխանատվության կանչելով, այլ Աշխտողկոմատը պետք է ինչպես կադրերի պատրաստման, նույնպես և աշխատանքի կազմակերպման ու պաշտպանության հարցերում հսկայական գործ կատարի, մասնավորապես «յերեսներս դեպի արտադրություն» լուրջունգը տնտեսական աշխատանքների գծով։ Արձանագրում ենք, վոր այս ուղղությամբ մեր աշխատանքները դեռ սկզբնավորման շրջանում են գտնվում։

Աշխատանքի մարմինների ուղղություն կենտրոնը պետի լինի նաև մեր ժողտնտեսություն մեջ ընդգրկված նորանոր կադրերի վորոշ ողակներում գոյություն ունեցող համաբային ու հետաձայն արամադրությունների դեմ ակտիվ պայքար մղելը, ինչպես, որինակ, գործալքողների, աշխդիսցիպլինան խախտողների, գոփողների և այլ նմանների դեմ։ Դժբախտաբար այս հարցերում ել մեր աշխատանքների մեջ նկատվում են թերություններ, չեղել են դեպքեր, չերբ մեր աշխատանքի մարմիններում նստած ընկերներից վոմանք, յենթարկվելով նման հետաձայն արամադրությունների, վոշ արգարացի պահանջներին ընդառաջելով, թույլ են տվել վորոշ սխալներ, համարելով այդ չարիքներից փոքրագույնը։ Անշուշտ այս յերեույթները գործնականում վտանգավոր են, ավելի ճիշտը՝ ոպպորտյունիզմի կենդանի արտահայտու-

թյուններ են։ Ինչպես մինչև այժմ մեր բայլելիկան կենտուկովի դեկավարությունը աչդ հիվանդագին յերեույթների դեմ պայքարել և Աշխտողկոմատը, նույնպես և հետագայում ել պետք է արի ուղղությունը՝ շարունակելով խիստ պայքարը նման վտանգավոր տրամադրությունների դեմ։

Յեթե այսոր կապիտալիստական աշխարհն որեցոր աճող տնտեսական ճգնաժամի հետևանքով տասնյակ միլիոնավոր գործազուրկների հեղինակ է դարձել, մեզ մոտ վոշ միայն հին աշխարհից ժառանգած գործազուրկությունը ամբողջովին վերացրինք, կամ թե չե դաշնակցական ավանտյուրիստների վարած քաղաքականության արդյունք մի քանի հազարների հասնող տնտեսական վորբերին կազդուրելով ու կրթելով և ապա սոցիալիստական ուղարկելով լիկվիդացիայի յենթարկեցինք, այլ և մեզ մոտ բանուժի սով է 1926/27 թ. մեր ամբողջ ժողտնտեսության զբաղված բանվորական ուժը կազմում էր 39.369, 1929/30 թ. այս հասնում է 64.582-ի, նույն թվականներին ցենզային արդյունաբերության մեջ առաջին տարին կար 4.968 բանվոր, վերջին տարին այդ թիվը հասնում է մոտ 9.000-ի։ Քանի վոր մեր ժողտնտեսությունը 1930-31 տնտ. տարում կանգնած է մինչև 30,000-ի հասնող բանուժի դեֆիցիտի առաջ, Աշխտողկոմատը պետք է իր գերագույն ջանքերը լարի, նորանոր աշխատավորական տարբերի աղբյուրները խոր ուսումնասիրի ու նրանց իր հաշվառման ցանցի մեջ առնի, պատրաստի, վերապատրաստի և մատակարարի մեր ժողտնտեսությանը։ Սակայն այս նաև տարեցտարի աճող բանուժի պահանջը չի լրացնելու. պետք է առանձին ուսումնասիրություն հարց դարձնել առաջիկա մեկ յերկու տարում կանանց մասսայականորեն արդյունաբերության մեջ աշխատանքի քաշելու գործը. պետք է տղամարդկանց փոխարինել նրանցով, դանողան վորակավորում տալու և այլ նման միջոցներով։

Մյուս հիմնական հարցը, վոր դրված է Աշխտողկոմատի առաջ, դա արդյունաբերության մեջ մեքենայացման—ապրոնալիզացիայի հարցերի կանոնավորմանը մոտիկից մասնակցելն ու ողակելն է, վորտեղ մինչև այժմ նույնպես չենք կարողացել գեա շոշափելի աշխատանք տանել։ Աշխատանքի կազմակերպման, ինչպես և բանվորության ուղիղնալ ոգտագործման և նրանց ճիշտ բաշխման և այլ նման հարցերի լուծումն պետք է աշխատանքի մարմինների ուղղություն կենտրոնում լինեն։

Ինչպես մինչև այժմ, այնպես ել հետագայում արհկազմա-



կերպով թյուրացնելի հսկա բանականների ոգնությամբ ու զեկամարու-
թյամբ նորանոր աշխատավորներ առաջ քաշելով աշխատանքի
մարմինների մեջ, Աշխտանքի մարմինները կարգադրացնի Հայաստանի
բանվորական լայն զանգվածների հույսերը, կատարելով այն բո-
լորը, վոր պահանջում է մեր վերակառուցվող սոցիալիստական
յերկրերը. միայն մեր բանվորական լայն խավերը պետք է Աշխա-
տանքի ժողովրդական կոմիտեների գործող կազմակերպիչն ել ավի-
լի մոտ լինեն և նրանց ոգնելու խնդրում չխնային իրենց ջան-
քերը: Յեվ այսպիսով, թեև կոտրելով մեր լիակատար հաղթանակի
2-րդ տասնամյակը, ամբողջովին վերակառուցելով ու հարմարեց-
նելով մեր բոլոր աշխատանքների ձևերն ու մեթոդները, ձեռք
ձեռքի տված Անդրկովկասյան Ֆեդերացիայի ու Սորհրդային
Միության բանվոր դասակարգի և Միության ամբողջ աշխատա-
վոր գյուղացիության հետ մենք արագ քայլերով կշարժվենք դե-
պի առաջ, հաղթանարելով սոցիալիստական վերելքի այն բոլոր
գեթվարությունները, վորոնք անխուսափելիորեն կծառանան մեր
առջև սոցիալիստական հոյակապ շենքի ավարտման ընթացքում:

Առաջաբանի փոխարեն	3
Ընդհանուր դրույթներ.	
ա) զբաղված բանուծի դինամիկան	5
Աշխատանքի պաշտպանություն.	
ա) Իրավական պաշտպանություն	
բ) Առողջացման պայմանների մասին	12
Բանվոր-ծառայողների նշութական դրույթյան բարելավում.	
ա) Աշխատավարձ և լրացուցիչ ոգնություններ	25
7-ժամյա բանվորական որ	29
Անընդհատ արտադրական շաբաթ	33
Աշխատանքի շուկայի կարգավորումը և գործազրկությունը	
ա) Գործազրկության շարժումը	
բ) Աշխատանքային կոլեկտիվներ	
գ) Ապահովագրված գործազուրկների քանակը	
դ) Բանուծի մատակարարում	
ե) Բանուծի առաջարկի և պահանջի դինամիկա	37
Բանուծի պատրաստում—վերապատրաստում	45
Սոցիալական ապահովագրում	49
Հանգստյան տներ և կուրորտ-սանատորիաներ	58
Հրատարակություն	64
Ամփոփումներ	66



ԳԻՆԸ 35 ԿՈՊ. (4) 1/4 մմ թղթի մեջ լինելու
աշխարհի մեջ

807

1
2



В. ХАЧИКОГЛЯН
**Наркомтруда ССРА за первое десятилетие
советизации**

Госиздат ССР Армении
Эривань—1930